

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1 Ռ. 25 4.

Դ

Թ. ՃՈՒՄԲՈՒՐԻՁԵՑ

Տ


11744

# ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ III ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ

ԹԱՐԳՎԱԼԵՑ ՎՐԱՅԵՐԵԼԵՑ

ԱՐՏ. ԴԱՎԹՅԱՆ



ՎՐԱՍՏԱՆԻ  
ՊԵՏՉՐԱՍ

Թ. Ի. Հ. Ի. Խ. Ա. Խ.  
1933

ՈՒՅ. - ՄԱՆԿԱԿԱՐ  
Ս Ե Կ Ս Ո Ր

25 SEP 2006

3(075)  
5-98

Թ. ՃՈՒՄԲՈՒՐԻՁԵՑ

# ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ 3-ՐԴ ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ

Թարգմ. Վրացերենից՝ ԱԲՏ. ԴԱՎԹՅԱՆ

2650  
1006  
28757

1167  
10675



ՀՐԱՍՏԱՆԻ ԹԻԳԻՆՈ  
ԹԵՏՐԱՑ 1932 ՈՒ. - ՄԱՆԿԱԿԱՐԺ.  
ՍԵԿՏՈՐ

20 JUN 2013

11844

Քաղ-Խմբագիր՝ Մ. Դաւթինյան  
Սըբագրիչ և տեխ. ղեկավար՝ Գ. Բաբուրյան  
Թողարկիչ՝ Ա. Լուրժիպանինին

I. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ  
ՊԱՅՔԱՐԸ ՑԱՐԻ, ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԻ ՈՒ  
ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ԴԵՄ

1. ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՏԱՆԵԼԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ  
ԵՐ ՃՐՇԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Շատ գյուղացու յերեխա այսու նույնիսկ կարող ե  
անտեղյակ լինել, վոր նրա նախորդները՝ պապերը, ապու-  
պապերը, հայրերը և այն, հին ժամանակ, ճորտատիրու-  
թյան որով, անտանելի վիճակումն են յեղել: Սրանից մոտ  
70 տարի առաջ գյուղացիները ճորտատերերի համար  
նույնպիսի սեփականություն ելին համարվում, ինչպես  
ձին, կովը, շունը և ուրիշ կենդանիները: Սրանք որենքով  
կցված ելին ճորտատերերին ու գտնվում ելին նրանց իշ-  
խանության տակ:

Այսպիսի դրություն եր տիրում ճորտատիրության  
ժամանակ: Աշխատավորների զավակները շարունակ պետք  
ե հիշեն այն տանջանք-չարչարանքները, վորոնց յենթա-  
կա ելին նրանց նախորդները ճորտատերերի իշխանության  
ընթացքում: Այս ճորտատերերի սերունդ՝ կապիտալիստ-  
ներին—սրանից 15 տարի առաջ բանվորները վոչնչացրին  
և նրանց իշխանությանն ել վերջ տվին:

Հետեապես մեզանից յուրաքանչյուրը պետք ե պատ-  
րաստ լինի, վորպեսզի Խորհրդային իշխանությունը պաշտ-



4255-91

պանի նախկին կալվածատերերի, կապիտալիստների և նրանց գաշնակից՝ ոտարյերկրյա կապիտալիստների հարձակումներից:

## ՃՈՐՏԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Յեթե ուզում ենք պարզ պատկերացնել, թե ինչպես եյին ապրում գյուղացիները ճորտատիրության ժամանակ, դրա համար հարկավոր ե կարգալ տեղեկություններ ճորտագյուղացիների կյանքի վերաբերյալ:

Հին լրագրների մեջ հաճախ պատահում ենք, վոր գյուղացիներին ինչպես անշունչ առարկա կամ անասուն առնում եյին ու ծախում:

Ահավասիկ, մի հին լրագրում ինչպիսի հայտարարություն և գետեղված ճորտ-գյուղացիներին վաճառելու մասին:

ՃՈՐՏ-ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ԸՆՏԱՆԻՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Մաքարթգելոս դադեթի», 1819 թ.)

1.

### ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔ

Գորդա գավառի Դիրք գյուղի բնակիչներ՝ Բարձրմ Մաշաբելովի ճորտ Դաթուա Կվաղանաձեն կվաճառվի իր կնոջ, տղայի, աղջիկների, յեղբորվորդի Նոնիայի և այգու հետ միասին այն հարյուր քսանյերեք մանեթի դիմաց, վորը պարտ և նա ազնվական Գաբաշվիլու աղջկանը — Յեղիսաբեդին։ Սրանց վաճառքի ժամանակամիջոցը նշանակված ե սույն տարվա նոյեմբերի 20 և գեկանելբերի 6<sup>7</sup>/20 թվերը։

2.

«1846 թ. ապրիլի 18-ին նշանակված ե հրապարակային վաճառքի Սոլոմոն Գուրգենինիցի պարաքի դիմաց նրա ճորտի ընտանիքը, վորը բաղկացած ե յերեք տղայից և չորս աղջկանից, իրենց կալվածքով, այգիով և տուն

ու տեղով. գտնվում ե Թիֆլիս գավառի Մարտոնի գյուղում։ Կալվածքը տարեկան յեկամուտ ե բերում 47 մանեթ։ Տասը տարվա յեկամուտը հաշվելով գնահատված ե 472 մանեթով։

Տիրոջ իրավունքները ճորտերի և նրանց գավակների վերաբերմամբ անսահման եյին։ Տերը, բացի վաճառելուց, կարող եր ընծայել, գրավ դնել։

Գյուղացիներին փոխանակում եյին զանազան առարկաների և ընտանի կենդանիների հետ։ Որենքը թուլատրում եր. Այն ժամանակավաճառի վորոշումներն ու ցարի կարգադրությունները լիովին հաստատում եյին։ Մարդկանց փոխանակելը զանազան կենդանիների հետ՝ ձիերի, կովերի, յեղների, շների — սովորական յերկույթ եր համարվում։

Ճորտ-գյուղացիներին վաճառում եյին ինչպես յերկրի ներսում, նույնպես և յերկրից դուրս։ Այս վաճառքին մասնակցում եյին նաև նոգեսրականներն ու կառավարություն



Ճորտատերերը ճորտերին քշում են վաճառելու։

Նր. Գյուղացու ընտանիքի անդամներին կարող եյին ծախել — ծնողներին առանձին, զավակներին ել առանձին կամ միասին։ Հաճախ եր պատահում, վոր վաճառած ճորտին շղթայակապ եյին բերում գնողի մոտ։

## ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՐ ՃՈՐՏԱՏԵՐԵՐԻՆ

Ճորտ-գյուղացիների ստրկացման ու շահագործման ասպարիզում կառավարությունը մեծ ոգնություն եր ցույց տալիս տերերին. ասստիկ ճնշում եր այն անհնագանդ գյուղացիներին, վորոնք առանց տրանջալու չելին կատարում. իրենց պարտականությունները: Մի անգամ մի վանահայր գանգատվում է թագավորին, ասելով, թե գյուղացիները թերանում են իրենց պարտականությունների մեջ: Իրակի թագավորը հրամայում է իր մոռւրացին. «Քեզ վրա վերցրու այսպիսի պարտականություն. վանահայր ցուցմունքի համաձայն ճիպոտահար արա բոլոր նրանց, ում գանակոծելը կցանկանա վանահայրը. շղթայակապիր նրանց, վորին մատնացույց կանի նա. վոչչացը ու նրան, ում վոր կցանկանա վանահայրը: Խլիր անսասունները և ամբողջ գույքը նրանից, ումնից վանահայրը կարիք կհամարի. խստագույնս վերաբերվիր անհնագանդներին և լիակատար հպատակության մեջ դիր բոլորին»:

Ահա թե ինչպիսի աջակցություն եր ցույց տալիս կառավարությունը տերերին ճորտ-գյուղացիների կողոպտման և ստրկացման զործում:

Գյուղացին մեխված եր տիրոջը և նրանից հեռանալու իրավունքներից զրկված. այն ժամանակվա որենքների համաձայն՝ տերը 30 տարվա ընթացքում իրավունք ուներ վորոնելու իր ճորտին և գանելու դեպքում վերադարձնելու իր մոտ:

Գյուղացին բազմաթիվ պարտավորություններ ուներ. նա պարտավոր եր տիրոջը տալու ցորենի, գարու, յեղիպտացորենի և զինու բերքից վորոշ մասը, և այն: Բացի այդ, գյուղացիները պարտավոր ելին գարնանը տիրոջ հողերը վարելու, ցանելու և այն:

Ճորտ-գյուղացիները պետք ե աշխատելին շաբաթական 2, 3 որ տիրոջ կալվածքում, այգում: Շատ տեղերում նույնիսկ 5 որ ելին աշխատում: Նրանք կատարում

ելին հետևյալ աշխատանքները՝ ցորեն ելին հսձում, յեղիպտացորենը քաղում, բանջարանոցներն ու այգիները ցանկապատում: Ծննդյան՝ զատկի տռներին գյուղացիներն իրենց տերերի համար նվեր ելին բերում հավ, սագ, գոմի, յուղ, ձու և այլն,

Կալվածատերը գյուղացիներից ընտրում եր՝ հովիվներ, ախոռապետներ, հացթուկներ, խոհարարներ:

Այսպիսի անտանելի դրություն եր տիրում Վրաստանում ճորտատիրության ժամանակ: Նույնպիսի գյուղացին եր նաև ճորտատիրության ժամանակ ուրիշ տեղերում:

## ՃՈՐՏ-ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՏԱՆՉՈՒՄ ԵՅԻՆ ԼՇԵԼՈՎ

Ճորտ-գյուղացիների անտանելի դրությունն առաջին անգամ նկարագրեց գրող Դանիել Ճոնքաձեն: Այս առթիվ նա գրեց մի պատմվածք—«Սուրամի բերդը» վերնագրով: Ահա մի պատկեր ճորտերի տանջալից կյանքից.

«Տերը վորոշեց իր ծառայող-ստրուկ աղջկանը ծախել, սակայն մայրն ու աղջիկը, տիրոջից զաղանի, զիշերով փախչում են թիֆլիս ու այստեղ մի քանի տարի ապրում: Այս մասին տեղեկություն ե տալիս մի քահանա և տերը գտնելով նրանց՝ կրկին վերադարձնում է իր մոտ: Նա սաստիկ պատիժ է տալիս յերկուսին ել: «Յերբ մեզ հասցըրին տիրոջ մոտ, նա, մի շաբք տանջանքների յենթարկելուց հետո, հրամայեց մեզ լծել գութանին այնպես, ինչպես լծում ելին յեզներին: Յեզան լուծը դրին վզներիս, սակայն տերը այս պատիժը գտավ թեթև, վորովինետե գութանի մեջ յեզները դանդաղ ելին քայլում և մենք ել շատ չելինք հոգնի. այդ պատճառով յերկրորդ որը հրամայեց, վոր մեզ լծեն կալի մեջ. ինքը նստեց կամի վրա և անողոքաբար ծեծելով քշում եր մեզ. այնպես առագ եր քշում, վոր քիչ եր մնում շնչախեղդ լինելինք: Իե, մինչև յերբ կարող ելինք վազել, նամանավանդ մայրս, վոր բոլորովին հյուծվել-քայլովի եր: Համարյա տասն ան-

գամ բոլորեց կալը, առանց ձայն-ծպտուն հանելու։ Տասն-մեկերորդ անգամ վոր պետք է պտտվելինք, մայրս հանկարծ վայր ընկավ ու մեռավ։ Խեղճ մորս նույնիսկ թույլ չտվին հանգիստ մեռներ. տերը կարծում եր, թե մայրս խաբում է, ոկտեց ճիպոտով անխնա հարվածել, ստիպելով վեր կենալու, և այսպես, գանակոծության մեջ՝ ավանդեց հոգին։

— «Տղաներ, զրան ել արձակեցեք, ոո տեսնում եք այլևս լծակից չունի, — առաջ տերը տղաներին իմ վերաբերմամբ»։

Այսպես է պատմում ճորտ-գյուղացին իր կրած ան-տանելի չարչարանքների մասին Դանիել Ճոնքածեյի գըր-վածքում։

## ՏԵՐԵՐԻ ՈՒ ՃՈՐՏԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ


Ճորտատիրության ժամանակ Ռուսաստանում ճորտ-գյուղացիների զրությունն անտանելի յեր. սրանք ստրուկ-ների վիճակումն եյին. գյուղացուն յերկոտանի «անպող» անասուն եյին անվանում, իրոք, գյուղացին, վորպես անասուն, ինչ պես առարկա—վաճառվում եր շուկայում։ Թղթափաղի մեջ տարվում ու տանում եյին ճորտ-գյուղացիներին։ Վորսկան շան լակոտը գնահատվում եր 3.000 մասեթ, իսկ գյուղացու աղջկա արժեքը 2-33 մասեթից չեր բարձրանում։ յերեխան մինչև անգամ 10 կոպեկով եյին վաճառում։

Ռուսական հին լրագրներում պատահում ենք հայտարարությունների ճորտեր վաճառելու մասին։ Ճորտ-գյուղացու և առարկայի միջև վոչ մի տարբերություն չկարդա. յերեխում և հետեւյալ հայտարարությունից։

«Վաճառվում է 16 տարեկան լավ բարքի տեր աղջիկ և մի հին կառք»։

«Վաճառվում են սփոսցներ... միաժամանակ յերկու աղջիկ և մի տղա, վարսավիր, և լավ տեսակի անդիսական ցեղի կով»։

Սովորաբար «ուղղից միջոց եր» համարվում՝ վայտը, ճիպոտով ծեծը, մտրակը, յերկաթների արանքների մեջ ճղմելը, վկնոցը, փուներին շղթաներ դնելը և այլն։



Ճորտ-գյուղացու տանջանքը Ռուսաստանում։

Չարչարանքի, ծեծի յենթարկված ճորտը յերկար ժամանակով հիվանդանալու իրավունք չուներ։ Որինակի համար՝ այն ճորտ-գյուղացուն, վորը 100 ստրակի հարված եր ստանում, արգելված եր մի շաբաթից ավելի պառկելու։

## ՃՈՐՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Անցյալ դարում ճորտատիրության պատճառով ստեղծած անտանելի գրությունը հաճախ առաջնում եր գյուղացիական հուզումներ, ապստամբություններ։ Գյուղացիական ապստամբությունները բռնկվում եյին ինչպես վրաստանում, նույնպես և Ռուսաստանի բազմաթիվ շըրջաններում ու վայրերում։ Գյուղացիական ապստամբությունները տեղի ունեցան կախեթում, Գուրիայում, Իմերեթիայում, սակայն մեծ ապստամբություն տեղի ունե-

ցավ Մինգրելիայում։ Ապստամբած գյուղացիների ղեկավարներն ասում եյին. «Մինգրելիայում գյուղացիները մարդ-արարածներ չեն, վաղուց հետեւ նրանք համբերությամբ են տանում անտանելի շարչարանք - տանջանքները և այժմ վորոշեցին՝ թե ավելի գերազասելի յէ կոտորվել, քան շարունակել նույն տանջալից կյանքը»։

Ռուսաստանում գյուղացիական ապստամբություններով համակեցին ամբողջ նահանգներ. նրանց խաղաղացնելու և ապստամբությունը հանգնելու համար ցարական կառավարությունը տասնյակ հազարներով պատժիչ ջոկատներ եր ուղարկում մինչև իսկ թնդանոթներով։ Գյուղացիները կոտորում եյին կալվածատերերին, կրակի ճարակ դարձնում նրանց տունն ու տեղը։ Փախած գյուղացիներից յերբեմն ամբողջ ռազմախմբեր եյին կազմակերպում, վորոնք հարձակումներ եյին գործում կալվածատերի վրա ու կոտորում նրանց։ Այս ապստամբություններն ահաբեկել եյին ցարական կառավարությանը, կալվածատերերին, վաճառականներին, ֆաբրիկաներին և այլն։

Սրանից 70 տարի առաջ ցարական կառավարությունը մասիփեստ հրապարակեց ճորտափրության վերացման մասին։ Սակայն այս մասիփեստով գյուղացիությունն իսկի ել չազատազրվեց։ Կալվածատերերը գյուղացիների հողերից լավագույն մասերը կտրեցին, վերցրին։ Սակավահոգությունն ստիպում եր գյուղացիներին կալվածատերերի հողերը կապարով վերցնել։ այդ պատճառով ել գյուղացիությունը տառապում եր կալվածատերերի ձիրաններում։ Գյուղացիները չեյին կարողանում վորեե յելք գտնել։

Ճորտափրության վերացումից հետո ել գյուղացիությունը գարձալ կալվածատերերի ձեռքի տակ մնաց։ Գյուղացին համարվում եր ցածր և իրավազուրկ գասակարգ։ Կալվածատերերն առաջգա նման շարունակում եյին իրենց իշխանությունը։

Այսպիսով ուրեմն, ճորտափրության վերացումն և կարծեցյալ գյուղացիական ապստամբումն ավելի շուտ գյուղացուն խարել եր նշանակում։ Գյուղացին մնաց կողպտված, մաշկազերծ և անարդված։

### ՃՈՐՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ճորտափրության վերացումը Ռուսաստանում ավելի շուտ յեղավ։ Վրաստանում ճորտափրության վերացումն ուշացավ մի քանի տարով։

Ճորտափրության վերացումը Վրաստանի գյուղացիությանը նույնպես թողեց թալանված վիճակում։ Գյուղացուն մնաց լոկ շարժական կարողությունը, իսկ հողը գարձալ մնաց կալվածատիրոջ ձեռքին։ Նույնիսկ տուն շինելու համար յեթե գյուղացին մի փոքրիկ հողի կտոր եր վերցնում, պարտավոր եր ահապին տուրք վճարելու կալվածատիրոջ։ Տարեկան տուրքով, կամ միանգագ վճարտալով՝ գյուղացին վերցնում եր կալվածատիրոջից այն հողամասը, վորոն առաջներում մշակում եր ինքը։

### ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՃՈՐՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԻՑ ՀԵՏԾ

Այսպիսով՝ գյուղացիությունն ամեն տեղ խարված մնաց. նա չստացավ անհրաժեշտ չափով հող և ամենախն չազատազրվեց կալվածատերերի ձիրաններից։ Գյուղացիությունը պարզապես տեսավ և համոզվեց, վոր կալվածատերերի պաշտպան ցարը չարաշար խարեց իրեն։ Այդ պատճառով ել շատ տեղերում սկսվեցին գյուղացիական ապստամբությունները։ Սակայն ցարական կառավարությունը գյուղացիների գնդականարումով և զանազան խըստագույն միջոցներ գործադրելով ճնշում եր այն։

Գյուղացիության մեծագույն մասը հողի պակասություն եր զգում և տառապում անտանելի չքավորության մեջ։ Դժգոհությունն որեցոր աճում եր։ Այս դժգոհու-

թյունը ցայտուն կերպով յերկան յեկավ սրանից 25—30 տարի առաջ, Ռուսական առաջին հեղափոխության ժամանակ:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Աշխատեցեք կարգացած նյութերի համաձայն կազմել փոքրիկ պատմվածք՝ «Ի՞նչպես եյին ապրում գյուղացիները ճորտատիրության ժամանակ»:
2. Յեթե ձեր քաղաքում թանգարան կա, կազմակերպեցեք եքսկուրսիա, տեղեկացեք, արդյոք վորոն նյութ կամ ճորտատիրության վերաբերյալ, յեթե կա, այն դեպքում ոգտագործեցեք ձեր պատմվածքի համար:
3. Հարց ու փորձ արեք հասակափորներին, վորոնք հիշելիս կլինեն ճորտատիրության ժամանակվա դեպքեր գյուղացիների կյանքից:
4. Դիմեցեք՝ «Սուրամի բերդ» կիոնուկարը:

## 2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆ ՈՒ ԲՎԱՆՈՐԴԱԿԱՐԳԻ ԱՌԱՋ ԳԱԼԸ

Ճորտատիրության վերացնելով մեծապես ոգտվեցին գործարանատերերը: Յարական կառավարությունից ու կալվածատերերից կողոպտված գյուղացիները ճարահատյալ մեկնում եյին քաղաքները՝ աշխատանք գտնելու: Մինչդեռ ճորտատիրական կարգերի ժամանակ նրանք այդ իրավունքներից զրկված եյին, վորը խոչընդուներ եր հարուցում ֆաբրիկա-գործարանների կարգավորել-զարգացնելու գործին:

Ճորտատիրության վերացումից հետո, հողից զրկված ու աղքատացած գյուղացիությունը գնում եր քաղաքներ մի կտոր հաց վաստակելու համար: Այնտեղ, ֆաբրիկաներ նրանց վարձում եյին ու տանում իրենց ֆաբրիկա-գործարաններում աշխատելու:

Ճորտատիրության վերացումից հետո, Ռուսաստանում ֆաբրիկա-գործարանների քանակը շատ աճեց: Կապիտալիստները հիմք դրին խոշոր ֆաբրիկա-գործարան-

ների: 24 տարվա ընթացքում մոտ 3,400 նոր ֆաբրիկա-գործարան հիմնվեց: Խոշոր ֆաբրիկա - գործարաններում հազարներով ու տասնյակ հազարներով բանվորներ հավաքվեցին, այսպես վոր, ճորտատիրության վերացումից մի 2 տասնյակ տարի անց, Ռուսաստանի ֆաբրիկա-գործարաններում բանվորների քանակը միլիոն ու կեսից անցել եր արդեն:

Այսպիսով, շնորհիվ կապիտալիստների նոր հիմնած խոշոր գործարան-ֆաբրիկաների, բանվորական ուժը խիստ աճեց: Գործարան-ֆաբրիկաներում ժողոված մեծաքանակ բանվորները միացան իրար հետ, կազմակերպվեցին միությունների մեջ ու սկսեցին պայքար մղել կապիտալիստների դեմ:

Այժմ ծանոթանանք, թե ի՞նչպիսի դրություն եր տիրում կապիտալիստների ֆաբրիկա-գործարաններում:

## 3. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՑԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

15 տարի առաջ Ռուսաստանում իշխանությունը գոնվում եր ցարական կառավարության, կալվածատեր իշխան-աղնվականների և կապիտալիստների ձեռքին: Սրանք կազմում եյին աղքարնակչության չինին փոքրածնությունը:

Ռուսաստանի մնացած բազմամիլիոն աշխատավոր բընակչությունը՝ բանվորներն ու գյուղացիները, զրկված եյին բոլոր տեսակի իրավունքներից և վոչ մի մասնակցություն չունեցին պետական գործերում: Մի բուռը կալվածատերեր, կապիտալիստներ և ցարի իշխանավորներն եյին տեր ու տիրական համարվում բազմամիլիոն աշխատավորների վրա ու նրանց բախտը դարձնում իրենց շահերի համաձայն:

Եերկրի վողջ հարստությունը՝ ֆաբրիկաներ, գործարաններ, այլ և այլ արտադրական ձեռնարկներ, հանքեր, յերկաթուղային ձանապարհներ, հող, քարածխի և այլ հան-

քերի, նավթի բնական աղբյուրները մի բուռը կապիտալիստների և կալվածատերերի սեփականություն եյին համարվում:

### ԲԱՆՎՈՐ ԴՍՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒՅԹՅՈՒՆԸ

Հնում, սրանից մոտ 40—50 տարի առաջ, ֆաբրիկա-գործարաններում աշխատող բանվորները զուրկ եյին այն անհրաժեշտ իրավունքներից, վորով պետք ե պաշտպանվեյին կտպիտալիստների անողոք կեղեքումներից ու շահագործումից: Կապիտալիստները ոգտվելով բանվոր դասակարգի իրավազրկությունից, մեծացնում եյին աշխատանքի որերի տեղությունը և կրծատում աշխատավարձը: Այն ժամանակները, բազմաթիվ ֆաբրիկա-գործարաններում, աշխատանքի որը հասնում եր 13—14 ժամի, սրանով չբավականալով, գիշատիչները դիմում եյին զանազան խայտառակ միջոցների ժամերի քանակն ավելացնելու համար: Նրանք բանվորներին ստիպում եյին, վոր աշխատանքի ներկայանան գործարանի սուլիչը սուլելուց առաջ և աշխատանքը վերջացնելուց հետո յել չգնային, մինչեւ վոր մեքենաները կարգի չգցեյին (մաքրել, յուղել և այլն):

Այս ծանր աշխատանքը բանվորից ահագին ժամանակ եր խլում: հաճախ եր պատահում, վոր նրան քննելու և ուտելու ժամանակն անգամ չեր մնում:

Ֆաբրիկա-գործարանների արհեստանոցները, վորտեղ ամբողջ որ ու գիշեր աշխատում եյին բանվորները, նեղ և կեղտոտ եյին: Կառուցելու ժամանակ նրանք բոլորովին չեյին մտածում բանվորների առողջապահության մասին:

Այս հոտած ու նեխված ողում բանվորները վիզը ծուռ, անտրառունջ, ավագ վարպետի հսկողության տակ որնիբուն աշխատում եյին: Ավագ վարպետները հաճախ ծեծում եյին ու սոսկալի տանջանքներ հասցնում բանվորքանիներին:

Առանձնապես անտառնելի եր կանանց ու յերեխաների դրությունը: Յերեխաներին մեծահասակ բանվորների հետ

հավասար կերպով եյին աշխատեցնում, վճարելով որական 10—15 կոպեկ վորպես աշխատավարձ:

### ԶՆԳԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ՅԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

Մբանից 30—40 տարի առաջ բանվորները 15—16 ժամյա աշխատանքի դիմաց ստանում եյին որական 30—40 կոպեկ:

Այսպիսով ուրեմն, այն ծանր ու տաժանակիր աշխատանքի համար, բանվորի ամսական աշխատավարձը հավասար եր լինում 12—14 մանեթի, իսկ բանվորուհիների աշխատավարձը հազիվ եր 10 մանեթի հասնում: Կնոջ աշխատանքը տղամարդու աշխատանքից պակաս եր գնահատվում:

Վորպեսզի բանվորների աշխատավարձը կրծատեյին և ավելի շահագործեյին նրանց, ֆաբրիկա-գործարաններում ընդունված եր տուգանելու սիստեմ: Տուգանում եյին չընչին արարմունքների համար: «որինակ՝ մի քանի գործարանում» «հորանջելու» կամ «արկղի ու մեքենայի» վրա նրատելու համար տուգանում եյին և այլն:

Ֆաբրիկանտները տուգանումներից ահագին գումարներ եյին գանձում, անկասկած, քչացնելով առանց այն ել չնչին աշխատավարձը: Ցարական Ռուսաստանում աշխատանքի պաշտպանությունը գոյություն չուներ:

### ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆԳՎԱԾ ԵՐ

Յուրաքանչյուր ժամ, որ, բանվորների կյանքն ու առողջությունը գործարաններում, հանքահորերում և այլ աշխատավայրերում վտանգի եր յենթարկված: Կապիտալիստները ինայում, ափսոսում եյին սննդաժեշտ գումարներ ծախսելու և կարգի զցելու արաւորավայրերը, վորպեսզի դժբախտ պատահարներից ազատ լինեյին աշխատաղները:

Այդ իսկ պատճառով բանվորությունը կոտորվում եր հազարներով. մի տեղ հոգնած, ուժասպառ բանվորունու շորն եր փաթաթվում մեքենայի անիվին, վորը նրան շրպուում եր յեռացրած ներկի կաթսան, մի ուրիշ տեղ—մեքենայի տակը գցում ու ճխում. մի յերբորդ տեղ ել. յեռացրած չուգունն եր թափվում ցնցոտիներով ծածկված կիսամերկ մարմին ու անասելի տանջանքներով սպանում, և այլն:

## ԴԱՏԱՐԱՆՆ ՈՒ ՑՍՐԻ ԱՐԲԱՆՅԱԿՆԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՆԵՐԻ ԿՈՂՄՆ ԵՅԻՆ

Բանվորներն իրավունք ունեյին գանգատվելու ֆարբիկա-գործարանի վարչության գեմ գատարանին, սակայն ինչ ոգուած. թե գատարանը և թե առհասարակ ցարական ծառայողները միշտ կապիտալիստների կողմն եյին պահում։

Բանվորն ում մոտ կուզեր թող զնար—դատաքանում, վոստիկանատանը, նահանգապետի, թե ցարական մյուս ծառայողների մոտ, ամենուրեք հանդիպում եր թշնամական և անբարյացակամ վերաբերմունքի։

## ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Այժմյան խորհրդային յերկրներում մինչև հոկտեմբերյան հեղափոխությունը հողի խոշորագույն մասը գրանվում եր կալվածատերերի, պետական գանձարանի և յեկեղեցի-վանքերի ձեռքին։ Ցարական կառավարության ժամանակակից մոտ 2 միլիոն գյուղացի ամենեին հող չուներ։ Գյուղացիության մնացած չնշին մասը սակավահող եր։ Նա, իր աղքատիկ տնտեսությամբ, չեր կարողանում գոյությունը պահպանել և, ստիպված, կալվածատերերից եր հող վերցնում կապալով։

Նույն գրությունն եր Վրաստանում ևս ցարի իշխանության որով։ Վրաստանի կալվածքների և հողի կեսից

ավելին պատկանում եր ցարի կառավարությանը, մի յերբ բորդը գմնվում եր թափադագնականների ձեռքին, իսկ աննշան մասը միայն պատկանում եր գյուղացիությանը։ Մեկ մոտ 40 հազարի չափ գյուղական ծուխ մարեւահող չուներ, իսկ 16 հազարի չափ ել բոլորովին հողագուրկ եր։

ՀՕՂԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԵՐ ԿԱՌՎԱԾԱՏԵՐԵՐԻՆ Պ


Մինչ հեղափոխությունը, ինչպես մուսաստանում, նույնպես և Վրաստանում հողի մեծագույն մասը պատկանում եր կալվածատերերին։

Մակավահոգությունը կամ բուգրովին հողազրկությունը խեղդաման եր անում գյուղացիներին։ Զուր չեր ասում 1905 թ. գուրիացի գյուղացին կառավարության ներկայացուցին, «Վոր պատկում եմ գուխս ու բիշի կալվածքում և, վրաներա՝ ուրիշի»։

Այսպիսի նեղ պայմաններում գտնվելով, գյուղացին սպիտիված եր գիմելու կալվածատերերին և կապալով հող խնդրելու։ Կալվածատերն ոգտվելով գյուղացու անշելանեւի վիճակից՝ տալիս եր հողը ծանր կապալավարձով։ Կապալավարձը վճարելուց հետո գյուղացուն մնում եր այսքան, վոր հաջիկ եր կարողանում իր գերդաստանը սովոր ձիրաններից ազատել։ Ինչպես տեսնում եր, գյուղացիները կախում ունեյին կալվածատերերից և համարյա թե կիսով չափ ճորտափրական գրաւթյան մեջ ելին գտնվում։

ՑԱՐՎԱԾՆ ԿՍՈՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ԲԵՌՆՈՒՄ ԵՐ ԾԱԽՐ ՀԱՐԿԵՐՈՎ

Ցարական կառավարությունը գյուղացիներին ծանր, համարյա անտանելի հարկերով եր բեռնում, մինչդեռ կալվածատերերին, վորոնք գյուղացիներից շատ-շատ հարուստ ելին, ազատում եր հարկերից, կամ մեծ արտօնություն-



ՎՀՀ-91

Ներ տալիս նրանց, վորի հիման վրա չնշին գումարներ եյին մացնում գանձարանը: Կարվածատերը մի հեկտար հողին վճարում էր մոտ 35 կոպեկ այն ժամանակ, յերբ գյուղացին մի հեկտարին վճարում էր 1 ռ. 35 կոպեկից մինչև 1—50 կոպեկ:

Այսպիսով—չքավոր գյուղացին յոթ անգամ ավելի շատ էր վճարում, քան թե հարուստ կալվածատերը:

### ՅԱՐԸ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՐ ԿՈԼՎԱԾԱՏԵՐԵՐԻՆ

Յարական իշխանությունը կալվածատերերի կառավարությունն էր և այդ պատճառով ել հովանավորում և պաշտպանում էր նրանց շահերը: Սակայն, միմիայն հովանավորելով չեր բավականանում է նա պետական ապարատներում խոշոր և պատասխանատու պաշտոններ ել եր տալիս նրանց: Նրանցից եր նշանակում՝ նահանգապետներ, մինիստրներ, բարձրաստիճան ծառայողներ և այլն: Կալվածատեր թափառ-ազնվականներին եր պատկանում նաև իշխանությունը գյուղում:

Յարական իշխանությունը կալվածատերերին գրամական ոժանդակություն ել եր տալիս: Կալվածատեր թափառ-ազնվականները զլանում եյին աշխատել, սակայն ուտելու մեծ ախորժակ ունեյին: Նրանք հաճախակի կազմակերպում եյին քեֆեր, կերուխումներ, թղթախաղությամբ եյին զբաղվում, լավ ձիեր ու վորոկան շներ եյին պահում, ահազին գումարներ ծախսում գեղեցիկ ու ճոխ հագուստներ ձեռք բերելու համար և այլն:

Այս բոլոր ձրիակերները ապրում եյին աշխատավոր գյուղացիության հաշվին:


Յարական իշխանության որով Ռուսաստանի գյուղացիությունն իրավազուրկ դաս էր համարվում: Գյուղացիությունը, թափառ-ազնվականների հանգեց, հավասար իրավունքներով չեր ոգտվում:

Գյուղացու վզին եր ծանրացած ամեն տեսակի պետական կոորդինատարությունը:

Գյուղական ճանապարհներ անցկացնել-շինելու ծանրությունը զրված էր գյուղացիության վրա: Այս աշխատանքից ազատ եյին թափառ-ազնվականները:

### ԳՅԱԼԱՑԻՆԵՐԻՆ ՃԻԹՈՏԱՀԱՐՈՒՄ ԵՅԻՆ

Գյուղացիության իրավազրկությունը միմիայն սրանով չեր սահմանափակվում: Յարի արբանյակները՝ պրիստավին ու տանուտերը, մարակով ու ճիպոտով եյին հյուրասիրում գյուղացիներին: Ռուսաստանում շատ եր տարածված Փիգիբական տանջանքներ հասցնելը. հաճախ եյին գանակոծում խեղճ ու թշվառ գյուղացիներին: Նման վորոշումներ հանում եյին նաև գատարանները:



Ճիպոտով Յարկածում են գյուղացուն:

Գյուղացիների «ազատարար» ցարը՝ Ալեքսանդր յերկրորդը, մարմնական պատիժները վերացրեց բոլորի համար, բացի գյուղացիներից:

Գյուղացիներին ճիպօտահարում ելին՝ յեթե նա վաս վերաբերմունք եր ցույց տալիս դեպի իշխանավորը, յեթե հրամանը չեր կատարում, իսկ հաճախ գանակոծում ելին հարկերը իր ժամանակին չմացնելու դեպում:

Ծնծում ելին նաև ծերերին, վորոնք հաճախ չելին կարողանում մարսել այսպիսի խայտառակ ստորացումն ու ինքնասպանությամբ վերջ ելին տալիս իրենց կյանքին:

### ԳԼԽԱՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՊԱՇԱՐԸ

Ինչպես տեսանք, բանվոր դասակարդի զրությունը ֆաբրիկա-գործարաններում ուղղակի անտանելի եր. հենց այս անտանելի զրության հետևանքով եր, վոր սրանից մոտ վաթսուն տարի առաջ Ռուսաստանում սաղմնավորվեց ու զարգացավ բանվորական շարժումը; Բանվոր դասակարդը իր անտեսական վիճակի բարվորման համար ստիպված եր պայքարի յելնելու վոչ միայն կապիտալիստների, այլ և ցարական կառավարության դեմ: Այդ պատճառով բանվոր դասակարդը սկզբիցնեատ սկսեց կազմակերպվել կապիտալիստների ու նրանց պաշտպան բոնակալության դեմ:

Յերկարատե պայքար ելին մղում նրանք—կապիտալիստների տապալման, աշխատանքի որերի կրծատման, աշխատավարձի բարձրացման համար: Նրանք կուվում ելին վերջ տալու համար աշխատանքի այն անտանելի պայմանները, վորոնք գոյություն ունելին կապիտալիստական ֆաբրիկա-գործարաններում:

Բանվոր դասակարդն այս յերկարատե ու համառ կրսվով կապիտալիստների իշխանությունը տապալեց և ձեռք բերեց փառապահն հաղթանակը:

### ԳՈՐԾԱՇՈՒԼԸ ԿՈՎԻ ԳԼԽԱՐ ԶԵՆՔՆ ԵՐ

Ֆաբրիկանտ կապիտալիստների դեմ կովելու համար բանվոր դասակարդը գործադրում եր գործադուլը: Արա-

նից մոտ վաթսուն տարի առաջ Ռուսաստանում առաջին անգամ գործադուլ հայտարարեցին խոշոր արդյունաբերական քաղաքներում: Մկրներում գործադուլն անկազմակերպ, անպատճառ եր լինում:

Սակայն բանվորները շուտով ըմբռնեցին, վոր հարկավոր և միանալ և պայքարը կազմակերպված ձեռով տանել:

Յարական կառավարությունը շատ լավ ըմբռնեց բանվորների միացած ուժի վտանգավորությունը և խիստ հականարգած տվեց: Ժանդարմները և հետախուզող վոստիկանությունը խիստ հրամաններ ելին ստանում հետապնդելու բանվորներին և սաստիկ միջոցներ ձեռք առնելու գաղտնի ժողովներ գումարողների նկատմամբ:

Բանվորներին ձերբակալում ելին ու բանտերն ուղարկում: Այսուեղ յերկար ժամանակ պահելուց հետո, նրանց աքսորում ելին Սիրիք: Հաճախ եր պատահում, վոր այս մասին բացի յուրայիններից և ֆաբրիկայում աշխատող ընկերներից վոչվոք վոչինչ չեր իմանում: Յարական կառավարությունը նման գործերը մեծ գաղտնապահությամբ եր կատարում:

### ԳԱՂՏՆԻ ԺՈՂՈՎՆԵՐ

Բանվորները մինչ գործադուլ կհայտարարելին գործարանատիրոջ դեմ, նախորոք պետք և խորհրդակցելին, թե ինչպես անցկացնելին և ինչ պահանջներ ներկայացնելին:

Այդ պատճառով, նախքան գործադուլը, գիտակից բանվորները գաղտնի հավաքվում ելին: Այս ժողովին սակավաթիվ մարդ եր ներկա լինում, վորովհետեւ բազմամարդ ժողով գումարելու վոչ մի հնարավորություն չեր լինում:

## ԾԱՇՈՒԿ ՏՊԱՐԱՆՆԵՐ ՅԵՎ ԹՌՈՒՑԻԿՆԵՐ

Կառավարության կողմից թույլատրված էամ, ինչպես ասում են, լեզու հրատարակող լրագրերի միջոցով անհնարին եր գործադուլային պատրաստություններ աեսնելը: Այսպիսի լրագրերը փակում եյին կառավարության կողմից: Այդ պատճառով բանվորներն ոգտվում եյին դադարնի (ընդհատակյա) մամուլով:

Վոստիկանության աշքից հեռու, գաղանի տպարանի դազգահի վրա, հատուկ թերթիկներ եյին տպագրվում, վորոնք կոչվում եյին թույլիկներ:

Կիսագրագետներին անգամ հասկանալի լեզվով տպագրված այդ թերթիկները սովորեցնում եյին բանվորներին, թե ինչպես պետք է պայքարեյին իրենց դրությունը բարգրություն համար:

Թույլիկներ տարածող ընկերներն աշխատում եյին գործարան գալ վաղ առավոտյան և փակցնել այն - գաղցյաների, արկղների վրա և այլ հարմար տեղերում:

Գործադուլ անցկացնելուն շատ եր նպաստում թույլիկը՝ վոգերում ու միաբանում եր նրանց:

Կարգացեք այս փոքրիկ հատվածը զրող Դ. Սուլաշշիլու «Զիկորի» զրվածքից:

## ԳԱՂՏՆԻ ՏՊԱՐԱՆ ՅԵՎ ԹՌՈՒՑԻԿՆԵՐ

Գաղանի տպարանը գտնվում եր քաղաքի խուլ ծայրամասում: Հասարակ տախտակներով ցանկապատած բակը, սովորական փայտե գոներով անցնելուց հետո մըտնում եք մի փոքրիկ խոնանոց-սենյակ, վորի տակը զրտնվում եր խոնավ ու մութ նկուղը: Նկուղը փորված եր հատկապես տպարանի համար. այստեղից մի նեղ անցք եր շինած, վորի ծայրը ջրհորն եր դուրս գալիս. այս անցքով եր գալիս ողը և կիսախավար լույսը:

Նեղ ու մութ նկուղում, ցածր սեղանի վրա զրված

եր «Ամերիկանկան» (տպող մեքենա), կողքին տառերով աղկղ և փայտե աթոռ:

Ամիսներով սուացության արված տպարանը շունչ ու կենդանություն ստացավ Զիկորի ձեռքին: «Ամերիկանկան» աշխատանքի զրվեց: Նկուղի լուսթյունը փարասվեց և խուլ դղրդյունով վոլոզվեց շրջակայրը:

Զիկորին լծվելով գաղանի աշխատանքներին, գաղանի և հմուտ կերպով ել սկսեց տարածել թույլիկները. սկզբում թույլիկներն ածում եր զամբյուղի մեջ, վերևից ձվեր գարսում և այնպես տեղափոխում մի տեղից մյուսը. ասկա ուրիշ միջոցներ գոտավ տանիքի վրա շինեց աղավիների բուն, բազմացրեց և ընտելացրեց նրանց:

Նա մի մեծ կողով ել ուներ. տակի մասում սի կանգունաշափ բարձրության վրա տախտակ եր խիած տախտակի և կողովի հյուսած տակի միջև յեղած աղատ մասը լցնում եր թույլիկներով, անլեզու զրականությամբ, իսկ վերևի մասում աղավիներն եյին թպրտում: Կողովի վերին մասը ծածկված եր ցանցով, մեջը նայողը միմիայն աղավիներ կտեսներ: Զիկորին շալակում եր կողովը և գոնե-գուռ շրջում, իբր թե աղավիներ եր վաճառում: «Քաղաքապահի» կողով անցնելիս բարձրածայն գոչում եր՝ «Աղավիներ, աղավիներ...աղավիներ եռ ծախում»... հետն ել շարժում եր կողովը, վորպեսզի աղավիները թպրտան:

Քաղաքի ծայրաթաղում յերկար, բարձր պատ և, պատի մեջ, սեացած շենքի բարձր բուխարուց սկ ծուխն ու ձապառոյտ շրջում ե գնդի պես, զանդաղ բարձրանում ու ապա ամպի նման ցրվում անհուն մթնոլորտում:

Ցանկապատի մեջ տեղն ամրացված ե յերկաթյա հըսկա սկ գուռը. շրջանսակայքն ել և սկ, ու փողոցն ել սկ ցեղի մեջ շաղախված:

Պատի տակով անցնում ե սալահատակած նեղ ձանապարհը: Այս ձամբով, սկ կետի նման, զիսարկը մինչև ականջները խրած, գնում ե մի մարդ:

Պատմեցի ներսի կողմից լավում և մեքենաների խուժ գղրդյուն. կարծես թե յերկաթյա վանդակի մեջ գարամ-ներ լինեն պահված, զոգոնք սովածությունից աղմկում են:

Անձանոթը յերկաթյա սև դռնից ներս և ծկրակում և անմիջապես շարունակում ճանապարհը: Կանգ առափ կարծես մեկին սպասելիս լինի:

Շուտով շենքի տանիքի խողովակից զազանի մռնչյունը ձեղում և ողը, ապա բացվում և հսկա դուռը: Բակում խառն ու ցրիվ յերկում են սև բլուզավորները, Դրոնից դուրս դալիս սեղմում են, հազիվ են կարողանու մուրս գալ...

Անձանոթը խառնվում և սև բլուզավորներին ծոցից թղթերը հանում ու սրանքա ձեռքը կոխում:

Սև բլուզավորների սև հոսանքը համբաքալ առաջ և շարժվում, անձանոթը սրանց մեջ սողոսկելով, սպիտակ թերթիկներ և տալիս նրանց. Վոչ վոք չի հարցնում նրա ով լինելը, կամ ինչ թերթիկներ են սրանք, միայն մեկը մոտենում և ընկերաբար քչփշում նրա աճանշին՝ «Զիկնը, դույց, դփորնիկը (գոնապան) նայում ե»... Զիկորը վոչ մի ուշադրություն չի դարձնում. յերբ դատարկում և ծոցը, բանվարներից հետանում և և շարունակում իր ճամբան:

Հետեւյալ որը գործարանում հայտարարվեց գործադույլ, նրան հետեւեցին ուրիշ գործարաններ, ֆաբրիկաներ, արհեստանոցներ:

Անտեսանելի ուժով վառվում եր վրիժառության կրակը և բանվորի վոկորված սիրտը պատրաստվում եր ապագա կոփիկների համար:

Գործադուլները փոխազրվում եյին բազմաթիվ միտինգների. իսկ միտինգները՝ փողոցային ցույցերի:

«Հսկա ալիքն անհողողող առաջ եր նետվում դեպի փայլուն սպագան»...

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԳԱՂՏՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես աեսանք, ցարական կառավարությունն արգելում եր բանվորական միությունները և խիստ հետապնդում: Ստիպված եյին գաղանի միություններ ստեղծել: Մրանից մոտ հիսուն տարի առաջ բանվորական գաղանի միություններ կազմակերպվեցին Ողեսայում և Պետերբուրգում: Այս միություններին մասնակցում եյին ու դեկագարում առաջավոր գիտակից բանվորները: Այդ բանվորներից հայտնի յեն-Վիկտոր Ոբնորսկին և Ստեփան Խալտուրինը: Վերջինիս ցարական կառավարությունը կախաղան բարձրացրեց, վորովհետեւ սա պատրաստվում եր յարի պալատը պայթեցնելու:

Ցարական կառավարության և նրա ժանդարմների աշքից չփրիպեցին բանվորական անդրանիկ կազմակերպությունների գոյությունը: Շուտով այս կազմակերպություններին մասնակցողներն ու զեկավարները կառավարության կողմից ձերբակալվում են ու աքսորվում:

Սակայն, իհարկե, սա չկարողացավ վերջ տու Ռուսաստանի բանվոր դասակարգի մզած կոփիսերին: Խոշոր քաղաքներում իրար յետելից հիմնվեցին գաղտնի կազմակերպությունները: Իսկ հետագայում այս կազմակերպություններից՝ լենինի զեկավարությամբ, առաջացավ կոմունիստական կուսակցությունը (բայլշկիկների), վորն ամբողջ Ռուսաստանի և համաշխարհային բանվոր դասակարգի զեկավարն ու առաջնորդը հանդիսացավ:

## ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ԿՈՎՈՎ ՅԵՎ ՄԵԾ ԶՈԼԵՐ ՏԱԼՈՎ ԶԵՐՔ ԲԵՐԵՑ ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆԸ

Ցարական կառավարության, կապիտալիստների և կոլվածառերի վրա հաղթանակ տանելը բանվոր դասակարգին եժան չի նստել, նրա լավագույն կովողները կորան աքսորավայրերում, բանտերում և կախաղանների վրա: Շատ բանվոր

զո՞ւ զնաց նաև ցարի զինվորների զնդակներին: Յերկար տարիների ընթացքում սովորում, զարբնվում ելին բանվոր-բարելշերիները դասակարգային պայքարի համար: Հաճախ պարտ խռով ելին, նրանց շարքերը քայլայվում ելին ու նոսրանում: Այդ պատճառով ցարական կառավարության ու նրա ժանդարմների միջոցով քայլայված կազմակերպությունների վերականգնումն ստիպված ելին համառ պայքարից հետո գլուխ բերել միայն:

### ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻԶԲԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Սրանից 60-70 տարի առաջ վրաստանում չկար արդյունաբերություն և ֆարբիկա-գործարաններ, հետեւ պես, դոյություն չուներ նաև կազմակերպված բանվոր դասակարգ: Ճորտատիրության վերացումից հետո վրաստանում անցկացրին յերկաթգծեր: Առաջին գործարանները հիմնվեցին Թիֆլիսում և Բաթումում: Առաջ յեկան ֆարբիկանոտ-կապիտալիստներ, դրա հետ միասին վրաստանում առաջացավ նաև բանվոր դասակարգը: Սրանից քառասուն տարի առաջ Բաթումում հիմնվեցին մի բանի գործարաններ, փորտեղ աշխատում ելին 10,000-ի չափ բանվորներ:

Մեզնում, վրաստանում, հենց առաջին որվանից բանվոր դասակարգն ունեցավ իր ղեկավար-առաջնորդները, փորտնք համարվում ելին աշակերտներ հոչակավոր ուսուցիչների՝ կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Ենգելսի:

Բանվոր դասակարգի անդրանիկ ղեկավար-առաջնորդներն ելին մեզնում՝ Ֆիլիպ Մախարաձեն, Միխա Ցիակայան, Ալյոշա Զափարիձեն և ուրիշները:

Բանվորական շարժումն ու բանվորական գործադրուները մեզ մոտ, վրաստանում, սկսվեցին սրանից 30 տարի առաջ: Անդրանիկ գործադրուլը տեղի ունեցավ Թիֆլիսի յերկաթգծի արհեստամոցներում 1900 թվին. այս գործադրութին մասնակցեցին մոտ 4 հազարի չափ բանվորներ:

Հետեւայ տարին, մայիսի 1-ին, կազմակերպվեց ցույց, վոր վերջացավ ժանդարմների ու վոստիկանության հետ ընդհարումով:

### ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԵՐ

Անցած նյութի հիման վրա պատասխանեցեք հետեւայ հարցերին:

1. Յարական կառավարության ժամանակ ֆարբիկա-գործարաններում ինչպիսի աշխատանքի պայմաններ կային:
2. Ինչպիս ելին վերաբերվում բանվորներին:
3. Կապիտալիստներն ինչու ելին բանվորներին տուգանում:
4. Ում շահերն ելին պաշտպանում ցարական վոստիկանությունն ու դատարանը:
5. Վորևէ ֆարբիկայում ծանոթացեք գիտակից, հասակավոր բանվորների հետ և հարցուփորձի յինթարկեցեք ցարական կառավարության ժամանակ ֆարբիկա-գործարաններում յեղած սովորութների ու պայմանների մասին:
6. Ինչպիս եր ցարական կառավարության ժամանակ գյուղացիների զրությունը:
7. Ինչի համար ելին կովում բանվորները.
8. Ինչ միջոցներով ելին կովում բանվորները կապիտալիստների ու ցարի գեմ:
9. Ռուսաստանում ով հիմք զրեց բանվորներին ղեկավարող բայլշերից կուսակցությանը:
10. Վրաստանում յերբ սկսվեց բանվոր դասակարգի պայքարը և նվեր ելին առաջին ղեկավարները:

### 4. 1905 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Յարական Ռուսաստանը բանվոր դասակարգի և գյուղացիների անմար անտանելի եր: Զուր չելին ցարական Ռուսաստանին անվանում՝ «Ժողովուրդների բանտ»:

Յարի ինքնակալությունը, իր վոստիկան ժանդարմներով, բանվորության համար անրնդունելի եր: Նա պետք է կործաններ այդ բոնապետությունը, փորպեսդի վերջնական հաղթանակին հասներ:

Բազմամիլիոն գյուղացիությունը ցարական Ռուսական Թուսառտանում գալարվում եր չքափորության ու խավարի ճիրաններում: Նա պահանջում եր հող և կիսով չափ ճորտատիրական դրությունից ազատազրում: Դրությունը բանվոր դասակարգի գաշնակիցը պետք և դառնար: Նա պետք և հետեւ նրան այն պարզ պատճառով, վորովհետեւ բանվոր դասակարգը գլխավոր ոյցն եր ներկայացնում ցարական բնակալությունից, կալվածատեր-կապիտալիստների իշխանությունից ազատագրվելու գործում:

Բանվորական և գյուղացիական շարժման հուժկու ամեր բոնեց Թուսաստանի բոլոր կողմերը: Քիչ եր մնում, վոր այս շարժումը 27 տարի սրանից առաջ սրբեր-տաներ ցարի ինքնակալությունը:

Թուսաստանի կառավարությունը 1904 թ. պատերազմի բոնվեց Յապոնիայի հետ այս պատերազմի գլխավոր նպատակն եր Հեռավոր Օրենքում ձեռք դցելու նորանոր հողամասեր, շուկաներ, մի բուն կապիտալիստների համար:

Բայց ցարական իշխանության և կապիտալիստների հույսերը չարդարացան: Թուսաստանի զորքն այս պատերազմում չարաշար պարտվեց. սա արագացրեց հեղափոխությունը Թուսաստանում:

### «ԱՐՅՈՒՆՈՑ ԿԻՐԱԿԻ»

1905 թ. հունվարի սկզբներին Պետերբուրգի (այժմ յան Լենինգրադի) Փարբիկա-զորդարանների բանվորները գործադրու հայտարարեցին. այս գործադրուներին մասնակցող բանվորների քանակը հասնում եր մոտ յերկու հարյուր հազարի: Գործազրկությունից և անտանելի դրությունից տանջված բանվորները, Փալոն քահանայի խորհրդով ու առաջնորդությամբ, վորոշեցին աղերսազրով գրանլ թագավորի մոտ:

Գապոն քահանան ցարական ժանդարմերիայի ու գաղտնի վոստիկանության ագենտն եր: Նրան հանձնարարված եր լինել բանվորների շրջանում և աշխատել հեղափոխական կրակը մարելու: Նա, իրոք, հիմնեց վոխադարձ ովնության դրամարկղներ, կազմակերպեց զանազան զարդություններ և այն, վորոնց շնորհիվ Դապոնը բանվորների շրջանում վորոշ համականք ձեռք բերեց:

Հունվարի 9-ին մի քանի հազար բանվորներ, կանանցով և յերեխաներով, խնդրագրով, գնացին թագավորի ձմեռային պալատը: Սա բանվորների անգիտակից մասն եր, վորին Գապոնը կարողացավ հեշտությամբ մոլորեցնել: Սրանք տակավին չելին հուսահատվել և թագավորից մեծ ակնկալություններ ելին սպասում:

Խնդրագիր-պետիցիայում բանվորները մի առ մի նկարագրում ելին իրենց սոսկալի վիճակը և վերջացնում ելին հետեւյալ տողերով. «Թագավոր, յեթե գու մեր աղա-չանք-պաղատանքը չես լիի—մենք այստեղ, այս հրապարակում, ձեր պալատի առաջ կկոտորվենք... Մեզ մնացել ե միայն յերկու ճանապարհ, մեկը գեղի ազատությունն ու յերջանկությունը, մյոււր՝ գեղի գերեզման. թագա-վոր, ցույց տուր մեզ՝ վոր ճանապարհով ընթանանք և մենք ել անտրասունջ կդնանք այն ճանապարհով, թեկուզ գեղի մահը: Դեհ, թող մեր կյանքը զոհաբերվի տանջված Թուսաստանին, մենք այս զոհաբերության համար պատ-րաստ ենք»:

Սակայն Եիկոլայ յերկրորդը բանվորների աղերսազրին պատասխանեց արձիգով:

Հունվարի 9-ին շատ բանվորներ զոհվեցին, սակայն «արյունոտ կիրակին» խոշոր նշանակություն ստացավ. բանվորական մասսաները զարթնեցին, նույնիսկ անգիտակից մասն ել կորցրեց գեղի թագավորն ունեցած հավատը. վերջնականապես համոզվեցին, վոր ցարի կառավարությունը մշտապես կալվածատեր-կապիտա-լիստների շահերը:

Հունվարի 9-ի լուսը կայծակի արագությամբ տառածվեց ամբողջ Ծուսաստանում. ի նշան բողոքի կազմակերպվեցին գործադուներ, ցույցեր, փոքր տեեց՝ յերկու ամիս և վորի ընթացքում կոփվեց բանվոր դասակարգի յերկաթե գիտակցությունը:

### ԱՊՍԱՍԲԱԾ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՈՒՂԿՈ ՃԱՆԱՊԱՐՀ ՑՈՒՅՑ ՏՎՈՂՆԵՐԸ ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԸ ՅԵՂԱՆ

Ապստամբած բանվորությունը իր գենքը դարձրեց բանապետության գեմ. հարկավոր եր նրանց ուղիղ ճանապարհ ցույց տալ. ահավասիկ այդ ճանապարհ ցույց տվողները յեղան Լենինն ու բայլշեվիկները, Բայլշեվիկները, Լենինի գլխավորությամբ, պնդում եյին, վոր հեղափոխության դժուավոր ուժն ու ղեկավարը հանդիսանում է, պրոլետարիատը. սա ամուր կապ պետք է ստեղծի գյուղացիության հետ. ընդհանուր գործադուներով և զինված ապրուտամբությամբ պետք է համար լիակատար ազատագրման:

Բայլշեվիկների կարծիքով, բանվոր դասակարգը չպետք է բավականանար ինքնակալության տապալումով և ճորտատիրական կարգերի վոչնչացումով միայն, այլ բանապետության տապալումից հետո իր գենքը պետք է ուղղեր բուրժուազիայի գեմ, վորին տապալելուց հետո պետք է խեր նրանից Փարբիկա-զործարանները, բանկերը և այն. Այս կովում պրոլետարիատին անպայման կապաշտպաններ զյուղի չքավոր մասը. ըստ բայլշեվիկների ու Լենինի սա մնիրաժեշտ եր: Որհասական կոփմեր մղելու համար Ծուսաստանի բանվորությունը բավականաչափ պատրաստականություն ուներ: Բանվոր դասակարգն այն ժամանակ ուներ իր սեփական կուսակցությունը, վորը ճիշտ ու անսայթաբ ղեկավարություն ցույց կտար նրան. սա Լենինի ստեղծած բայլշեվիկյան կուսակցությունն եր:

### ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴԱՎԱՑԱՆՆԵՐԸ

Սակայն այս ժամանակ կային այնպիսիներն ել, վորոնք համարում եյին իրենց բանվոր դասակարգի ղեկա-

վարներ, մինչդեռ, իրականում այդպես չէր, նրանք ուղիղ ճանապարհ ցույց տվողներ չեյին: Նրանք չեյին հավատում բանվոր դասակարգի հաղթանակին Ծուսաստանում: Այսպիսին եր Տրոցկին, վորն ապացուցում եր, թե բանվոր դասակարգը միայն Ծուսաստանում չի կարող հաղթանակել. Ծուսաստանի բանվորությունը կարող է հաղթել միայն այն պարագայում, յեթե հեղափոխությունը բռնկի մյուս յերկրներումն ել և այնտեղի բանվորությունն ել հաղթանակի: Յենթաղրենք, թե Ծուսաստանում պրոլետարիատը հաղթեց, ինչ փույթ, նա դաշնակից չի ունենա, գյուղացիությունը սրա գեմ գուրս կգա և պրոլետարիատն անպայման կապարտվի: Ինչպիս տեսնում եք, Տրոցկին չել հավատում, վոր աշխատավոր գյուղացիությունը կպաշտպաներ բանվոր դասակարգին կապիտալիստների տապալման և սոցիալիզմի կառուցման աշխատանքներում: Նա այսոր ել չի հավատում, յերե խորհրդային յերկրում հաղթություն տարած բանվոր դասակարգն աշխատավոր գյուղացիության հետ միասին առաջ և ընթանում սոցիալիզմի կառուցման ճանապարհով: Տրոցկին գտնվում է բուրժուական յերկրում և այնտեղից անխնա կուիլ և մղում մեր գեմ. սրանով նա ոգնում է համաշխարհային բուրժուազիային, վորը խորհրդային յերկրի վոխերիւմ թշնամին է: Ուրիշն, Տրոցկին ներկայումս Խորհրդային Միության բանվոր դասակարգի դավաճանն է և նրա գեմ ել պայքարում և միշտ:

1905 թ. հեղափոխության ժամանակ բանվոր դասակարգի ղեկավարներ եյին հանդիսանում նաև մենշևիկները, սակայն իրականում նրանք բանվոր դասակարգի դավաճաններ դառնա: Մենշևիկները չեյին մասնաւում, վոր բանվորներն ու գյուղացիները շուտ ազատազրվեյին բուրժուազիայի գերիշխանությունից. ընդհակառակը, ըստ մենշևիկների, պրոլետարիատը ձեռք-ձեռքի աված համերաշխորեն պիտի հետեւեր բուրժուազիային, նեցուկ հանդիսանար նրան, նույնիսկ արյուն թափեր նրա համար: Մեն-

շեկները խիստ պայքարում ելին այն բանվորների դեմ  
և պախարակում նրանց, վորոնք զենքը ձեռին կովի ելին  
յելնում: Նրանց կարծիքով պրոլետարիատը ողնող ուժ  
պետք է հանդիսանար տիրող դասակարգի համար իսկ սա  
նշանակում եր, վոր բուրժուազիան ինքնակալության դեմ  
մզած կովում կողտապործեր բանվորներին, ինքը պետա-  
ան վարչության մեջ իշխանություն ձեռք կբերեր, յեր-  
կար տարիներով ծանր լուծը դնելով բանվորների վզին:

Մենշեկները 1905 թ. հեղափոխության ժամանակ  
այսպիս դաշտանեցին բանվոր դասակարգին:

Արագիսով ուրեմն, 1905 թ. հեղափոխության ժամա-  
նակ Ռուսաստանի բանվոր դասակարգին ճշմարիտ ուղի  
ցույց տվողը յեղագ Լենինը և բայլշեկյան կուսակցու-  
թյունը:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԴՐՈՒՅ

Սկսած հունվարի 9-ից մինչև հոկտեմբեր ամիսը՝ շար-  
ժումը բանվորների ու գյուղացիների մեջ որեցոր աճում,  
զարգանում եր: Հոկտեմբերին շարժումը պատկվեց ընդ-  
հանուր գործադուլով: Հոկտեմբերի 17-ին դադարեցին յեր-  
կաթուղիների աշխատանքները, ընդհատվեցին նաև հեռա-  
գրատները, Փարբիկա-գործարաններում աշխատանքները  
նույնպես գաղարեցին. Փակվեցին բանկերը, զրասենյակ-  
ները և այլ հիմնարկությունները, Փակվեցին նաև գպրոց-  
ները, ընդհատվեց լրագրերի հրատարակությունը. մի-  
խոսքով սովորական կյանքը մեռավ:

Միաժամանակ Պետերբուրգում կայացավ բանվորա-  
կան պատգամավորների խորհուրդը, վորը հանձն առաջ-  
շարժման զեկավարությունը:

Նման խորհուրդներ կազմակերպվեցին նաև մյուսքա-  
ղաքներում:

Հոկտեմբերյան ընդհանուր գործադուլը մեծ վտան-  
գի առաջ կանգնեցրեց ցարական միապետությանը: Կա-

ռավարությունը վորոշեց զիջումների դիմելու և հրապա-  
րակեց հոկտեմբերի 17-ի մանիֆեստը. այս մանիֆեստի  
հիման վրա Ռուսաստանում պետք է Պետական Դումայի  
ընտրություններ կատարվեյին:

Սակայն, Պետական Դումայի ընտրությունների հա-  
մար այնպիսի կանոնադրություն մշակվեց. վորով ապա-  
հովում եր կապիտալիստների ու կալվածատերերի իրա-  
վունքներն այդ որգանն անցնելու:

Հոկտեմբերի 17-ի մանիֆեստով բավարարվեց բուր-  
ժուազիան նա պրոլետարիատի հետ չդնաց այլև ինքնա-  
կալությունը տապալելու համար: Նրան վախեցնում եր  
բանվոր դասակարգի հաղթանակը բռնապետության նկատ-  
մամբ, վորովհետև քաջ համոզված եր, վոր ցարի գահն-  
կեցությունից հետո հերթը հասնելու յեր բուրժուազիային:

## ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԱՐՅՈՒՆԱԼԻ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Բանվորները շարունակում ելին հեղափոխությունը:  
Կառավարությունը վորոշեց զենքով խորտակել այն: Դեկ-  
տեմբերին կրկին ընդհանուր գործադուլ հայտարարվեց,  
վորին շուտով Մոսկվայում հետեւց զինված մեծ ապստամ-  
բությունը:

Այս ապստամբությունը խոշոր նշանակություն ու-  
ներ: Նա բանվոր դասակարգի առաջին արյունավի ընդհա-  
րումն եր միապետության և բուրժուազիայի հետ:

Կառավարությունն այս ապստամբությունը խեղդեց  
արյան մեջ:

Դեկտեմբերյան ապստամբության պարտությունը վո-  
րոշեց 1905 թ. հեղափոխության բախտը: Սկսվեց խիստ  
ուեակցիա: Հեղափոխության մասնակիցներին ու ղեկա-  
վարներին հագարներով ուղարկում ելին բանտերն ու Սի-  
բիրի: Պետերբուրգի բանվորական պատգամավորների խոր-  
հրդի անգամներին ել ձերբակալեցին և Սիբիր աքսորեցին:  
Հեղափոխական գլխավոր վայրերն ուղարկվեցին պոտժիչ

զորախմբեր, վորոնք ամբողջ քաղաքներ ու գյուղեր կրակի ճարտակ ելի դարձնում: Միապետությունը ժամանակավորապես հաղթեց:

### 5. 1905 թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

1905 թ. հեղափոխությունը խիստ ծավալվեց Անդրկովկասում և մասնավորապես Վրաստանում: Հունվարի 9-ի արյունոտ կիրակիի գեպշից սկսած հեղափոխական շարժումը կայծակի արագությամբ տարածվում է Վրաստանի բոլոր գյուղերում ու քաղաքներում:

Հունվարի 9-ի գեպքերը ցնցեցին Թիֆլիսի, Բաթումի, Ճիաթուրի բանվորներին: Դործադուլ հայտարարվեց ամենուրեք, այնպես վոր Վրաստանի բանվորությունը միահամուռ արձագանք տվեց:

### ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Քաղաքի, Փաբրիկա-գործարանների և այլ արտադրությունների բանվորների հետ գյուղացիությունը ևս շարժվեց: Գյուղացիական ապստամբություններն առանձնահատուկ բնույթ ստացան գյուղում: Դժգոհ գյուղացիությունն ամեն տեղ հեղափոխական կրակ վառեց: Ապստամբված գյուղացիությունն անհաշտ կոիվ եր մղում կալվածատերերի դեմ, խում եր հողերը և բռնի սեփականացնում: Թափաղ-ազնվականների պաշտպան ու գյուղացիության ախոյան վոստիկանական պաշտոնյաներին՝ պրիստավներին, տանուտերերին, դղիճներին և այլն, արժանի պատիժներ եյին տալիս:

Գյուղացիները զենքը ձեռքին դուրս եյին գալիս նըրանց դեմ և շատերին նույնիսկ սպանում եյին: Ապստամբած գյուղացիությունը կոտրում եր հատկապես այն կալվածատերերին, վորոնք վորոգայթներ եյին լարում նրանց դեմ:

Բայլցեիկները քաղաքի բանվորների և գյուղի աշխավորների միջև յեղած կապը հաստատում-ամրացնում եյին: Նրանք աշխատում եյին ջատված ուժերը համախմբվել, վորպեսզի դյուրին և անխորտակելի լիներ նրանց արշավը միապետության, կալվածատեր-թափաղ-ազնվականների և բուրժուազիայի դեմ: Գյուղացիությունը քշում եր գյուղից կառավարության ծառայողներին, վերջ եր տալիս նրանց որենքները և իր՝ հեղափոխական կոմիտեներն ստեղծում:

### ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԳՈՒՐԻՍՑՈՒՄ

Գյուղացիական հեղափոխական շարժումների մեջ Գուրիան առաջին տեղն է գրավում:

Սրանց շարժումը զեկավարում եյին Բաթումի փոկած գործարաններից առևն վերադարձած գուրիացի բանվորները:

Դեւնս 1905 թ. սկզբներից Գուրիայում ցարական կառավարության վոչ մի որդան այլև չեր աշխատում, ամեն տեղ ժողովուրդն իր սեփական իշխանությունն եր հաստատել:

Կառավարությունը մտադիր եր այս շարժումը զինվորական ուժով լիկվիդացիայի յենթարկելու, սակայն չհամարձակվեց և, այդ պատճառով, իր ներկայացուցիչն ուղարկեց Գուրիա գյուղացիների հետ բանակցելու համար: Կառավարության ներկայացուցիչը շրջեց ամբողջ Գուրիա և բանակցություններ վարեց գյուղացիների հետ: Ամեն տեղ դյուղացիները պատմում եյին իրենց չարքաշ գրության մասին, վոր կրում եյին կալվածատերերի, պետական չինդիքիների, հոգևորականների ձեռքից: Նկարագրում եյին նրանց վոտնձությունները, հողի պակասության պատճառով կրած նեղությունները և այլն: Մի Ասկանացի գյուղացի կառավարության ներկայացուցչին այսպիսի խոսքերով եր նկարագրում իր սակավահողությունը. — «Վոր պառ-

կում եմ, գլուխս իմ կալվածքումն ե, իսկ վոտներս՝ ուրիշից»։ Մի այլ տեղ ել գյուղացիք կառավարության ներկայացուցչին հայոնում ելին։ «Զեղանից յուրաքանչյուրը տասնյակ դեսյատինով հող ունի, իսկ մենք չդիտենք, թե վնասի դնենք մեր վոտը»։ մեր պահանջները յերեք բառով ե արտահայտվում, մենք ուզում ենք հաց, արդարագատություն և ազատություն»։

Սակայն կառավարությունն իր ներկայացուցչին շուալ յետ կանչեց և Գուրիա ուղարկեց պատժիչ արշավախումբ գեներալ Ալիխանով-Ավարսկու գլխավորությամբ։ Այսպիսով ուրեմն, Գուրիայի գյուղացիության արդարացի պահանջներին կառավարությունը պատասխանեց վամփուշտներով։

Գուրիայից բացի, գյուղացիական ապստամբությունները փարթամ ծավալ ստացան նաև Արևմտյան Վրաստանի համարյա բոլոր վայրերում։ նախկին Զուգդիդի, Շորապանի, Քութայիսի գավառներում և Արևելյան Վրաստանում։

## ԲԱՎԱԴ-ԱԶՆՎԱԿԱԱՆԵՐԻ ՍԵՎ ՀԱՅՈՒՐԱԿԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ ՑԵՎ ՌԵԱԿՑԻԱՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Յարական կառավարությունը, կալվածատեր թափադաղնվականներն ու բուրժուազիան միշտ ձեռք-ձեռքի տված գուրս ելին գալիս հեղափոխական սրբութարիատի և գյուղացիության գեմ։ Ազստամբած գյուղացիությունից անարդիք ու փարզած թափադաղնվականները միացան, կառավարության աջակցությամբ կազմակերպեցին զինված ջոկատներ։ նման սև հարյուրակային խմբեր կամ ջոկատներ կազմակերպեցին Քարթլիում կալվածատեր թափադաներ՝ Աբգուշելիշվիլիները, Ցիցիշվիլիները և Փալավանդիշիլիները։ Սրանց նպատակն եր՝ ապահովել իրենց՝ նեղափոխական գյուղացիներից, հանգցնել շարժումը և վերականգնել նախկին դրությունը։ Կառավարությունն ամեն

կերպ աջակցում եր թափադաղնվականների սև ջոկատներին՝ ուղարկում եր փամփուշտներ, դենք, վոստիկաննական պաշտոնյաններ և այլն։

Նույն ձեռվ ելին վարդում թափադաղնվականները նաև Արևմտյան Վրաստանում։

Կառավարությունը փորձեր արավ նման սև հարյուրակային խմբեր կազմակերպելու նաև քաղաքներում, բանվորական մասսաների գեմ կոխվեր մղելու նպատակով։

Սակայն հեղափոխական կազմակերպությունները կարգածատեր թափադաղնվականների սև ջոկատներին հակառակ եցին կարմիր ռազմիկներին։ Այս կարմիր ռազմիկները գլխավորապես բայլշեհիկների նախաձեռնությամբ կազմակերպվեցին։ Կարմիր ռազմիկները ստեղծվեցին Գուրիայում, Շորապանի գավառում, Քարթլիում և այլն։

Մոսկովյան պրոեւստարիատի դեկտեմբերյան արյունալից ապստամբությանն արձագանդ տվին Գուրիայում, Շորապանի գավառում, Թիֆլիսում, Բաթումում և այլն։

Սակայն ցարի սև ունակցիային այլևս վոչ մի ուժ չեր կարողանում դիմադրել։

Բոնապետական իշխանությունը կրակով ու զենքով խեղդեց ու արմատախիլ արավ հեղափոխական նույնիսկ վերջին մասորդները։

Վրաստանում սև հարյուրակային գեներալներ՝ Գրյազնովի, Ալիխանով-Ավարսկու, Կրիլովի գլխավորությամբ կազմվեցին պատժիչ արշավախմբեր։ Այս արշավախմբերը հարձակվեցին Վրաստանի աշխատավորության վրա և դեռքով ու կրակով հյուրասիրեցին նրանց։

Այսպիսով, Խուսատանում սկսած սև ունակցիան սպակալի խստություններ գործադրեց ծայրամասերում, մասնավորապես Վրաստանում։

1905 թ. ՆԵԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Զնայելով հեղափոխությունը պարտվեց, այսուամենայնիվ ցարական իշխանությունը զգալիորեն ցնցվեց։

Յարական իշխանությունը հեղափոխությունից բարական թուլացած դուրս յեկավ:

Կառավարությունը վորպեսզի հեղափոխությունը տապալեր, հարապարակ հանեց թնդանոթներ և գնդացիներ, վորոնց որնիբուն բանեցնում եյին: Դրա գիմաց, բանվորները կովի ընթացքում խոշոր փորձառություն ձեռք բերին: Բանվորական մասսաները յուրացըրին փողոցում կրովելու ձևերն ու կոփեցին հեղափոխական քուրայում:

Հունվարի 9-ի «արյունոտ կիրակի»-ի գեղքերից հետո, բանվորը գեպի թագավորը ունեցած հավատն ընդմիշտ կորցրեց:

Պրոլետարիատն ու գլուղացիությունը լավ դաս առան. նրանք, իրենց նպատակներին համեմու համար, պատրաստվեցին հետագա վերջնական կափերի համար:

Յեթե չլիներ այս նախապատրաստական աշխատանքը, 1905 թ. գեներալ վորձը, 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունն անկարելի կլիներ: Այսպես գնահատեց 1905 թ. հեղափոխության արժեքը պրոլետարիատի մեծ ուսուցիչ լենինը:

### 1905 թ. ԼԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հեղափոխությունը պարտվեց, վորովհետի պրոլետարիատի դաշնակից դյուղացիությունը հարկավոր չափով պատրաստված չեր:

Մեծ ոգնություն ցույց տվեց ֆրանսիական բուրժուազիան ցարական կառավարությանը փոխառություններով: Ֆրանսիական բուրժուազիայի համար ձեռնուու չեր, վոր Ռուսաստանում հեղափոխությունը հաղթանակեր. նրանց կապիտալիստներն ահազին բանակությամբ փարթիկա-գործարաններ ունեյին Ռուսաստանում. յեթե ցարական կառավարությունը տապալվեր, այն գեպօւմ նրանք կը կվեցին բանվորական մասսաներին շահագործելուց: Այդ պատճառով ել ֆրանսիական բուրժուազիան ոգնության

ձեռք մեկնեց Ռուսաստանի ցարական կառավարությանը, տալով հարկավոր քանակությամբ դրամական ոժանդակություն, վորպեսզի հնարավորություն արվեր մարտընչելու հեղափոխական պրոլետարիատի գեմ:

Այս մեծ կովի ընթացքում մենշևիկները դավաճանեցին բանվորներին. նրանք պաշտպանում եյին բուրժուազիային, աչքաթող անելով բանվոր դասակարգի շահերը:

Այսպես պարտվեց բանվոր դասակարգը առաջին հեղափոխության ժամանակ: Սակայն նա պատրաստվեց հետագա կովի համար և ճիշտ վոր 12 տարի անց, Հոկտեմբերյան հեղափոխությամբ, նա փառավոր հաղթանակ տարավ:

### ՀԱՐՑԵՐ ՑԵՎ ՀԱՆՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ցարական կառավարությունն ինչու հայտարարեց պատերազմ Յապոնիայի դեմ:
2. Ով եր Գալոնը և ինչու մոտեցավ բանվորներին:
3. Ինչ հույսով եյին գնում բանվորները թագավորի մոտ և ինչով վերջացավ:
4. Բանվորական շարժման հետագա գարգացման համար ինչ նշանակություն ունեյին հունվարի 9-ի գեպօւմը:
5. Ինչ հայացք ունեյին լենինն ու բայլշեկները 1905 թ. հեղափոխության մասին:
6. Ինչ հայացք ուներ Տրոցկին:
7. Ինչով արտահայտվեց մենշևիկների դավաճանությունը բանվոր դասակարգի նկատմամբ:
8. Ինչ նշանակություն ուներ 1905 թ. հեղափոխությունը Ռուսաստանի բանվոր դասակարգի հաղթությունների համար. ինչ եր ասում այս մասին լենինը:
1912 թ. ապրիլի 4-ին հեռավոր Սիբիրում, Լենայի վոսկու հանքերում, ցարական վոստիկանությունը, ժանդարմերիան ու զորքը գնդակահարեցին գործադուլավոր բանվորներին: Հարյուրավոր անմեղ բանվորի արյուն թափվեց. այս հանգամանքը Ռուսաստանում առաջ բերեց մասսայական գործադուլներ: Շատ կարճ ժամանակում գործադուլներն ընդգրկեցին ամբողջ ռայոններ, մի քանի տեղերում գործը հասավ մինչև զինված հարձակումների: Բանվորները կովելու համար շինում ելին բարոփիկադներ, սակայն այդ պահին վրա հասավ համաշխարհային պատերազմը և դա թուլացրեց բանվորական շարժման գործը:

### ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՉԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1914 թ. սկզբեց համաշխարհային պատերազմը: Յեվրոպայի և Ամերիկայի անկուշտ կապիտալիստները միմյանց

վրա հարձակվեցին՝ նորանոր յերկրներ և շուկաներ ձեռքբերելու նպատակով: Սկզբեց սոսկալի արյուննեղություն: Կապիտալիստները դեպի պատերազմ քշեցին միլիոնավոր աշխատավոր մասսաներին և նրանց գնդացիրների ու թնդանոթների բաժին դարձրին:

Եյս սկզբած պատերազմի վտանգն ու զարհուրանքը բայլշեմիկներն առաջուց զգում ելին ու գուշակում: Նրանք գրում ելին, վոր համաշխարհային պատերազմը, արյուննեղությունը անխուսափելի յեր ու սպասելի: Լենինն ավելի վաղորոք եր գրում պատերազմի զարհուրանքի մասին: Ամենքին հայտնի յեր, վոր Յեվրոպայի կապիտալիստները պատրաստվում ելին չտեսնված արյուննեղության համար, թալանող և կողոպտող կապիտալիստները կովում ելին իրար դեմ առևտրական շուկաների, նոր յերկրների տիրանալու և գրավելու համար:

Ուստի բոլոր յերկրների բանվոր դասակարգը պետք է զինվեր ու պայքարեր կապիտալիստների դեմ: Նա հնարավորություն չպետք ե տար, վոր կապիտալիստները պատերազմ սկսելին: Նա պատերազմ պետք ե հայտարարեր իր յերկրի կապիտալիստների դեմ և վոչնչացներ նրանց իշխանությունը:

### ՅԵՐԿՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԴԱՎԱՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս ժամանակ գոյություն ուներ բանվորական միջազգային միություն, վորը կոչվում եր յերկրորդ ինտերնացիոնալ:

Մարքսի—առաջին ինտերնացիոնալի քայլայումից հետո անցել եր 14—15 տարի, յերբ Պարիզում հավաքվեցին սոցիալիստները, վորոնք բավորական միջազգային միություն, կամ յերկրորդ ինտերնացիոնալ հիմնեցին:

Յերկրորդ ինտերնացիոնալն զգում եր պատերազմի մոտալուս վտանգը: Նա իր համագումարներին բանաձեւեր եր ընդունում պատերազմի դեմ, սակայն այս վորոշում-

ները կրում եյին կեղծ բնույթ, այն ժամանակվա սոցիալիստներից շատերը բուրժուազիայի պաշտպաններն ու նըռանց գործակալները դարձան։

Յերկրորդ ինտերնացիոնալի մեջ Լենինը ևս մտնակեցում եր, սակայն պատերազմի խնդրում նա մյուս սոցիալիստների կարծիքին չհամակերպեց, նա պատերազմի խընդրում առաջարկում եր այն, թե պատերազմը պետք է ոգտագործել կապիտալիստների գեմ, նրանց բնակալությունը փօխչացնելու համար, պատերազմը՝ պետք եւ դառնա բանվոր գուսակարգի պատերազմ իր յերկրի կապիտալիստների գեմ։

Հենց վոր արձակվեց համաշխարհային պատերազմի առաջին թաղանոթը, յերկրորդ ինտերնացիոնալի սոցիալիստները դափաճանեցին բանվոր դասակարգին։ Նրանք ձայն տվին և կողմնակից գուրս յեկան այն խոշոր վարկերի բաց թողմանը, վորոն անհրաժեշտ եր կապիտալիստների կազմակերպած պատերազմի համար։ Դերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի և մյուս յերկրների սոցիալիստները դաշն կոքեցին իրենց յերկրների կապիտալիստների հետ և ամբողջ ուժերով աշխացում եյին պատերազմի կազմակերպման գործին։ Բանվորներին խաբում եյին ասելով, թե նրանք պաշտպանում են հայրենիքը և պետք եւ կովեն թշնամու գեմ։ Իսկ իրականում գերմանացի բանվորը գնդակ եր արձակում ֆրանսիայի և Անգլիայի բանվորի վրա, ֆրանսիայի և Անգլիայի բանվորը թափում եր ֆերմանիայի բանվորի արյունը և այլն։ Այս բոլորը նրա համար եր, վոր իր յերկրի թալանչի կապիտալիստի քմահաճույքներն ու ցանկությունները կատարվեյին։

Լենինը յերկրորդ ինտերնացիոնալի սոցիալիստներին բնորոշեց վորպես բանվոր դասակարգի դափաճանների, նա անհրաժեշտ համարեց, վոր ստեղծվի ու կազմակերպվի նոր միջազգային միություն, նոր ինտերնացիոնալ—Յերրորդ ինտերնացիոնալը։

Լենինը պատերազմին պատերազմ հայտարարեց և սովորեցնում եր բանվորներին, վոր կապիտալիստների կազմակերպած պատերազմը վերածեյին կապիտալիստների գեմ պատերազմի։

### ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԼԵՆԻՆԻ ՎԵՐՍԴԱՐՁԸ ՌՈՒՍԱՏԱՆ

1917 թվին, ցարի բոնակալության տապալումից հետո, Լենինը վերադարձ Ռուսաստան։ Այս ժամանակ իշխանության գլուխն եյին անցել կապիտալիստներն ու ամենակարևոր նրանք չեյին մտածում բանվորների և գյուղացիների կենցագի ու նրանց գրության բարելավման մասին։ Ֆարբիկա-գործարանները տակավին մնում եյին կապիտալիստների ձեռքին, իսկ հոգը կարգածատերերի։

Բացի սրանից, կապիտալիստների և մենշևիկների իշխանությունը կանգնած եր Ֆրանսիայի և Անգլիայի թալանշի կապիտալիստների կողքին և շարունակում եր արյուններությունն ու թալանը։

Բանվորական մասսաները Պետրոգրադի և Մոսկվայի փողոցներում դուրս եյին գալիս բնդեմ ոյսպիսի իշխանության։

Հուկիսի սկզբներին Պետրոգրադի բանվորների գժոհնությունները հասան մինչեւ արյունեղությունների։ Մենցիկների և կապիտալիստների իշխանությունն արգեն վրանդի մեջ եր, նրանք այս բոլորի պատճառը համարում եյին Լենինին և բայլշիկներին, այդ պատճառով ել սկսեցին բայլշիկներին հալածել, Լենինին և մյուս զեկավար բայլշիկներին ցանկացան ձերբակալել, բայց Լենինին աջողվեց թագնվել, նրան թագցրեց բանվոր եմիլիանով։ Թագաւոյն վայրից Լենինը շարունակում եր բայլշիկներին զեկավարել։ Նա մեծ արագությամբ պատրաստում եր ապստամբություն, վորը կտապալեր մենշևիկ-կապիտալիստների իշխանությունը։

Լենին ու բայլշեկիները բանվոր մասսաներին քաջալերում եյին ապստամբություն կազմակերպելու համար։ Նրանց լոգունդն եր՝ «Փաբրիկա-գործարանները բանվորներին, հողը աշխատավորներին, ևաղաղությունը — ժողովովդին, իշխանությունը խորհուրդներին»։

Հոկտեմբերի 25-ին (նոր տոմարով նոյեմբերի 7-ին) Պետրոգրադի պրոլետարիատը, Լենինի և բայլշեկիների ղեկավառությամբ, տապալեց մենշևիկ-կապիտալիստների իշխանությունը։ Պետական իրավունքներերն իր ձեռքն առաջ բանվոր դասակարգը։

Այսպիսով, Լենինի և նրա ստեղծած բանվորական կուսակցության անխոնջ ու յեռանդուն պայքարի շնորհիվ, բանվոր դասակարգը և աշխատավոր դյուղացիությունն ազատազրկեց կալվածատերերի, կապիտալիստների բռնակալությունից յերկրագնդի մի վեցերորդ մասի վրա։

### ՀՈԿՏԵՍԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՅԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ ՇԱՏ ԱՆԳԱՄ ԵՆ ՓՈՐՁ ԱՐԵԼ ԼԵՆԻՆԻ ԿՅԱՆՔԻՆ ՎԵՐՁ ՏԱԼՈՒ

Լենինը կատաղի թշնամի յեր բոլոր նրանց, վորոնց իշխանությունը տապալեց ինքը և բայլշեկիյան կուսակցությունը, Լենինի անունը սարսափ եր ազգում բոլոր թալանչ շահագործողների վրա։

Լենինի անունը թանգագին ու սիրելի յեր բոլոր յերկների աշխատավորների համար, վորովհետեւ նա, Լենինը, իր ամբողջ կյանքը նվիրեց աշխատավորների ազատագրում մեծ գործին։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Լենինի թշնամիները շատ անգամ փորձել են վերջ տալ նրա կյանքին։

Բուրժուազիան և ևսերների (սոցիալիստ հեղափոխականներ) ու մենշևիկների կուսակցությունները ատելությամբ եյին լցված դեպի Լենինը։ Եսերների կուսակցությունը, վոր անհաշտ պատքար եր մզում հոկտեմբերյան

հեղափոխության գեմ, վորոշեց սպանել բայլշեկիյան կուսակցության բոլոր ղեկավարներին։ Յեվ իրոք, նրանք կարողացան լավագույն բարչերիկ կուսակցուներին սպանել, ինչպես որինակ՝ վորոշաբակուն, Ուրիցիուն։

Եսերները նույնպես ցանկանում եյին սպանել Լենինին։ 1918 թ. ամառը Լենինը Մուկուցի քանվորական ուսունական մեկուս ղեկացրեմ եր կորպուս։ Նրան արգատեղ համառում եր եսերուկան կուսակցություն անդամ Յանի կապլանը։

Սյու կիսը վորոշել եր սպանել Լենինին, վորի սիրանահաց ջերտորեն բարտիստը եր միլիոնավոր աշխատավորների համար և ատելությամբ եր լցված բանվորների և գյուղացիների թշնամիների հանդեպ։

Կապլանն ուներ բրաունինդ ատրճանակ, վորի մեջ թունավորված գնդակներ կային ծայրերը բռնի, վորպեսզի ավելի ծանր պիրավորիցին ու տանշեյին բանվորների և գյուղացիների առաջնորդի մարմինը։ Կապլանը շորս անգամ կատակեց ավտոյին մոտեցող Լենինին, զնդակներից մեկը ծակեց Լենինի թոքը, իսկ մյուսը զգի միջով անցուվ և քիչ մնաց ջարդեր վորնաշարի վոսկորը։ Պիրավորված Լենինը քամիւս և արյունոսությունից, բայց նա թույլ չտվեց, վոր իրեն ձեռքերի վրա տանեյին կրեմը։ Ինքը բարձրացավ իր վոտով և սրանով ուզեց ցույց տալ, թե ինչպինի համբերությամբ ու զսպվածությամբ պետք է կարողանալ տանել բոլոր տեսակի գժվարություններն ու ցավերը բանվոր դասակարգի ազատագրման համար, հեղափոխության ժամանակ։

Ուրիշը չեր կարող տանել այն ծանր վերքերը, վոր տուած բերին կապլանի թունավորված գնդակները, բայց Լենինի յերկաթյա որգանիզմը կարողացավ այդ վերքերին զիմանալ Լենինը հերոսաբար զիմացավ ծանր հիվանդությունը։ Լենինը հաղթեց, նա ելի կայուն կերպով, պողպատյա կամքով շարունակեց իր աշխատանքները։

Իզուր կմտածի մեկն ու մեկը, թե Լենինը այս դեպ-

Քից հետո իրեն կիմնամեր կամ կլթագնվեր. վնչ. նա եղի ազատ, տուանց վախենալու հաճախում եր բանվորական ժողովները, ինչպես առաջ հաճախ նրան տեսել են Ժողովներից մեն-մենակ վոտով կրեմլ վերադառնալիս։ Ծանր վերջերն անտարակույս խոր ազդեցություն գործեցին Լե-



Վ. Ի. Անդր 1919 թ.

նինի որդանիզմի վրա, նրա մարմնի մեջ մնացին Կապլանի արձակած գնդակները։ Գնդակների հանելն անհնարին յեղափ, վորոնց Լենինը իր մարմնի մեջ կրեց մինչև մահ։

Չնայած սրան, Լենինը հինգ տարվա ընթացքում եղի յեռանգով շարունակում եր զեկավարել իր ստեղծած կուսակցությունը և առաջին բանվորական իշխանությունը։

## ԼԵՆԻՆԻ ՀԻՎԱՆԴԱՆԱԼՆ ՈՒ ՎԱԽՃԱՆՎԵԼԸ

Իր ամբողջ գիտակցական կյանքի և պայքարի ճանապարհին լենինն ամենքին զարմացնում եր իր անսպառ յեռանգով։ Նա միշտ աշխատում եր ուժերի չտեսնված լարու մով։ Լենինի սիրաը և ուղեղը ծանրաբեռնված ելին գերմարդկային աշխատանքներով, նա ամբողջ 16—18 ժամ աշխատում եր, նրա վրա չեր նկատվում հոգնածություն և նա յերբեք չեր ոգտվում հանգստով։ Հսկտեմբերյան հեղափոխության պայքարի որերին, յերբ Ռուսաստանի և ամբողջ աշխաբճի բանվորության բախտն եր վորոշվում, այդ պահին Լենինի աշխատանքներն անսովոր ընույթ ելին կրում։


Սրանով աննկատելի կերպով մաշվում եր հետզհետե լենինի ուղեղն ու սիրաը, սրան ավելացան նաև մարմնի ծանր վերջերը։

Լենինի որդանիզմն ու նյարդերը հետզհետե թուլացան։ Առաջին անգամ նա ծանր հիվանդացավ 1922 թվի մայիսին։ Լենինին առողջացնելու համար ձեռք առնվեցին բոլոր տեսակի միջոցները։ Հրավիրվեցին աշքի ընկնող մասնագետ բժիշկեր, հատկապես նյարդային և սրտի հիվանդությունների մասնագետներ, Լենինին բժշկում ելին նաև լավագույն կոմունիստ բժշկները։ Լենինը շուտով առողջացավ։ Նրա առողջությունը կարգավորվեց, սակայն նույն թվի գեկտեմբերին կրկին հիվանդացավ ավելի ծանր կերպով։ Նա այլևս չեր կարողանում գրել, թեև թելադրում եր իր միտքը, վորը սղագրվում եր ընկերների կողմից։

Այդ ժամանակ Լենինը մտածում եր խոշոր խնդիրների մասին։ Այդ խնդիրներն ելին մեր բանվորական հեղափոխության և միջազգային հեղափոխության ապագա բախտը։ Հիվանդ և անշարժ զրության մեջ յեղած Լենինը, քանի լեզուն գեռ նրան հնագանդվում եր, կարողանում եր խոշոր ու նշանակալից մաքեր արծարծել, նա շարունակ թելադրում եր այդ մտքերը։

Լենինը մի քիչ կեղզուրվեց, յերբ նրան տեղափոխեցին Մոսկվայի մոտ գտնվող Գորկա տագանը։ Լենինի կիսում՝ Նազեֆդա Կոնստանտինովսան և քույրը՝ Մարիա Իլինիշնան անբաժան եյին Լենինից։ Հետևում եյին նրա ամեն մի քայլին, ոգնում առողջությունը վերականգնելու գործում։

Լենինը Գորկայում այնքան կազդուրվեց, վոր բժիշկները թույլատրեցին նրան լրացիր կարգալ։ Բայց շուտով դարձյալ վրա հասան ծանր բովեներ։ 1924 թվի հունվարի 21-ին, յերեկոյան ժամը 6 և 50 բովելին Լենինը վախճանվեց։ Գիտությունը դարձյալ թույլ ու տկար գտնվեց Լենինին մահից փրկելու համար։



Դիորկայոր այն տունը, վերական վախճանից Լենինը։

Լենինը մեռավ, սակայն միլիոնավոր աշխատավորների սրառում նա ապրում է, վորովհետև նա իր ամբողջ կյանքը նվիրեց նրանց ազատագրելու դժվար գործին։

## ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Լենինի մահից հետո Լենինի կուսակցության առաջնորդն է հանդիսանում ընկ. ի. Ստալինը։ Նա Լենինի մեծ աշակերտն է։ Սոցիալիզմի կառուցման գործում նա Մարքսի, Ենգելսի և Լենինի ուսմունքով ե զեկավարվում։ Հենց սկզբի որերից Ստալինը Լենինի սրտակից աշակերտն է յեղել, նա միշտ պաշտպանել ե և անշեղ կիրառել Լենինի ուսմունքը ու մի բոլե անգամ շի շեղվել Լենինի ցույց տված ձանապարհից։

Նա անինա և անհաշտ կերպով պայքարել ե բոլոր նրանց դեմ, ովքեր փորձել են աղավաղել Լենինի ուսմունքը և հենց այս պատճառով կոմունիստական կուսակցությունը Լենինյան կուսակցության դեկավարությունը նըրան հանձնեց։ Նա այսոր հանդիսանում է Լինինյան կուսակցության առաջնորդը, նա սոցիալիզմի կառուցման մեծ գործի զեկավարն է յերկրագնդի մեկ վեցերորդ մասի վրա։ Սրա հետ միասին Ստալինը միջազգային բանվոր դասակարգի առաջնորդն է։ Նա համաշխարհային հեղափոխության շտարի՝ կոմունիստական ինտերնացիոնալի զեկավարն է։

Ստալինը նույնպես, ինչպես և Լենինը, իր ամբողջ կյանքն ու յեռանդը նվիրել ե բանվոր դասակարգի ազտագրման համար մզկելիք պայքարին։

Իռուեր (Սոսո) Զուղաշվիլին, վորին համաշխարհային բանվոր դասակարգը ձանաշում և Ստալին անունով, ծընվել ե Գորիում 1879 թվի դեկտեմբերի 21-ին։ Նրա հայրը արհեստավոր եր՝ խարազ, հետո նա փոխադրվեց Թիֆլիս և դարձավ բանվոր՝ կտակիտալիստ Աղելլամանովի կոշիկների ֆարբիկայում։

Ստալինն իր մանկությունն անց է կացրել Գորի քաղաքում։ Նա սկզբներում սովորում եր Գորվա հոգեոր դըպրոցում, իսկ հետո տեղափոխվեց Թիֆլիսի հոգեոր սեմինարիան։

Մանուկ հասակից սկսած Ստալինը ցույց եր տալիս առանձնահատուկ ընդունակություններ և համարվում եր լավ, առաջաղեմ աշակերտ:

Սեմինարիայում աշակերտ յեղած ժամանակ Ստալինը ծանոթացավ Մարքսի ուսմունքի հետ, սկսեց խորն ուսումնասիրել այն և շուտով սեմինարիայում աշակերտական գաղտնի մարքսիստական խմբակներ կազմակերպեց, վորոնց ղեկավարում եր ինքը: Այդ ժամանակ նա ծանոթացավ սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը և կապեր ստեղծեց Թիֆլիսի յերկաթուղու գլխավոր աղհետանոցի բանվորների հետ: Նա հաճախակի ներկա յեր լինում բանվորական գաղտնի ժողովներին:

1898 թվին Ստալինը դարձավ Թուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ: Սեմինարիայում այդ ժամանակ գոյություն ունեղ իրատ և բռնի ուժիմ, Ստալինը պայքարում եր այդ ժամանդարմական ուժիմի դեմ:

Սեմինարիայի այն ժամանակվա գործիչները, վերոնք ցարական ժանդարմերիայի գործակալներն եյին, նկատել եյին, վոր Ստալինն անհավատարիմ անձնավորություն եւ Շուտով նրան հեռացրին սեմինարիայից:


Նրանից հետո սկսվում է Ստալինի պայքարը բանվոր դասակարգի ազատազրման համար: Նրան հալածում եր վոստիկանությունը, վորի շնորհիվ ստիպված ե լինում ապրել գաղտնի և աշխատել ընդհատակյա:

Բայց եկեղեցան կուսակցության ստեղծման որից Ստալինը բայց եկեղեցական գործակալ անհաջող կրիվ եր մզում մենաշեփերի դեմ, վորոնք սկզբից ի վեր բանվոր դասակարգին դավաճանելու գործով եյին զբաղված:

Ստալինը դարձավ Վրաստանի և ամբողջ Ասպրկովկաստի բայց եկեղեցների ու բանվոր դասակարգի ղեկավար, նա իր աշխատանքների կենտրոնը վորագրեց բանվորական շարժման յեռուն վալը՝ Բագու քաղաքը:

Առաջին անգամ Ստալինին ցարական վոստիկանությունը ձերբակալեց 1902 թվին, վորովհետև նա բանվորական

ցույցերի գլխավոր ղեկավարն եր: Մի տարուց հետո նրան աջակորեցին Սիբիր՝ իրկուտսկի նահանգը:



Հ. Կ. Կ. (թ) Կետկոմի գլխավոր քաբառուզոր Ի. Ստալին:

Այս ժամանակից հետո վոստիկանությունն ու ժանդարմերիան միշտ հալածել են ու հետեւ Ստալինին: Մինչ հեղափոխությունը, ցարական վոստիկանությունը նրան

նինդ անգամ ձերբակալել և աքսորել ե, սակայն, նա միշտ աջողեցնում եր աքսորից փախուստ տալ և զործի պլուխ անցնել ու շարունակ զեկավարել բայց նիշյան կռւսակցության ու բանվոր դասակարգի պայքարը:

1913 թվի գարնանը Ստալինին ձերբակալեցին և աքսորեցին:

Այդ ժամանակ Ստալինն արդեն չորս տարի մնաց աքսորված և Պետրոգրադ վերադարձավ 1917 թվի վետրբովարյան հեղափոխությունից հետո միայն:

Նա մյուսների հետ միասին զլիսավորեց կռւսակցության և բանվոր դասակարգի պայքարը: Հոկտեմբերյան հեղափոխության պատրաստման ժամանակ Ստալինը Լենինի հետ միասին եր աշխատում ու նրա հետ միասին պայքարում բանվոր դասակարգի հաղթանակի համար:

Ստալինն անմիջականորեն զեկավորում եր բանվոր դասակարգի ապստամբության զործը հոկտեմբերյան որերին:

Այսուհետեւ Ստալինը կովում եր քաղաքացիական պատերազմի ճակատում, վոչչացնելու համար այն թշնամիներին, վորոնք շրջապատել ելին առաջին և չորսնիւած խորհրդացին պետությանը: Այդ պատճառով առանձնահատուկ զինվորական ծառայության համար Ստալինը պարզմատրված և կարմիր գրոշի շքանշանով:

1922 թվից Ստալինը կոմունիստական կռւսակցության համագումարի կողմից ընսրվեց կռւսակցության զեկավարութանի (Կենտրոնական Կոմիտեյի) զլիսավոր քարտուղար: Կռւսակցությանը և բանվոր դասակարգին նա տանում և ուղիղ ճանապարհով զեպի վերջնական հաղթանակ:

Նրա լենինյան զեկավարության շնորհիվ Խորհրդային Միության բանվոր դասակարգը մեծ աջողություններով կռւսակցում է սոցիալիզմ, իսկ այս հաղթանակը վոչ թե մենակ Խորհրդային Միության բանվոր դասակարգի հաղթանակն է, այլ նաև ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի:

Ամբողջ յերկրագնդի թշնամիներն ու բարեկամները քնորշում են Ստալինին, վորով բանվոր դասակարգի ը կոմունիստական կռւսակցության խոշոր և մեծ զեկավարի ու առաջնորդի:

### ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ

Սրանից տասնյերեք տարի առաջ կատարից ծովի այն կողմը, հեռավոր և ամայից՝ ավագով պատած տափաստանում սեպտեմբերի 20-ի գիշերը գնդականարեցին Բագրի



Ստեփան Շահումյան,

բանվոր դասակարգի ղեկավարներին ու առաջնորդներին: Սրանը Բագրի առաջին խորհրդացին կռւսակարության անդամներ 26 կօմունարներն ելին:

26 կոմունարների հետ միասին գնդականարվեցին Բագվի և ամբողջ Անդրկովկասի բանվոր գասակարգի և բայլշենքան կուսակցության պարագութներ՝ Ստեփան Շահումյանը և Ալյոշա Զափարիձեն:

Ստեփան Շահումյանը ծնվել է 1878 թվին Թիֆլիսում. քանի տարեկան եր նա, յերբ ավարտեց միջնակարգ դպրոցը:

Աշակերտ ժամանակ Շահումյանը մասնակցում եր աշակերտական գողոտնի կազմակերպությունների աշխատանքներին. նա ղեկավարում եր աշակերտական ամսագիրը, վոր հեղափոխական բովանդակություն ուներ:

Մուսասամանում ուսանող յեղած ժամանակ Շահումյանն ակտիվ մասնակցում եր ուսանողական շարժմանը: Ուսանողների չքավոր մասը սպայքարում եր տիրող բռնակալության գեմ: Շահումյանն ամբողջովին գտնվում եր պրոլետարիատի մեծ ուսուցիչներ՝ Մարքսի և Ենդելսի փիլիսոփայության ազգեցության տակ:

1905 թվի հեղափոխության ժամանակ Շահումյանն Անդրկովկասի բայլշենքների կուսակցության և բանվոր գասակարգի ղեկավարը դարձավ, նա այդ ժամանակ Անդրկովկասի բայլշենքների որաթերթ «Անդրկովկասի բանվորական թերթ»-ի գլխավոր ղեկավարն եր:

1905 թվի հեղափոխությունը պարտվելուց հետո, դաժան ուեակցիայի ժամանակ, Ստեփան Շահումյանը տեղափոխվեց Բագու: Այն ժամանակ այնտեղ աշխատում եյին նրա գողեմի ընկերներ՝ Կոբան (Ստալինը), Արել Եսութիծեն և Ալյոշա Զափարիձեն: Շահումյանը նրանց հետ միասին Բագվում ղեկավարում եր բայլշենքներան կուսակցության աշխատանքները:

Ստեփան Շահումյանին առաջին անգամ վստիկանությունը ձերբակալեց 1909 թվին, սակայն շուտով նրան արձակեցին: Յարական ժանդարմերիան հանդստություն չեր տալիս նրան: Հետեւում եյին նրա ամեն մի քայլին:

Փետրվարյան հեղափոխության և ցարական իշխանության տապալման որից հետո, Ստեփան Շահումյանը դար-

ձավ Անդրկովկասի բայլշենքների առաջնորդը: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, Մուսասամանի խորհրդագյին կառավարությունը Ստեփան Շահումյանին նշանակեց Անդրկովկասի արտակարգ կոմիսար: Նա տեղափոխվեց Բագու, վորաեղ միաձայն ընտվեց Բագվի բանվորական պատգամավորների խորհրդի նախագահ:

Ստեփան Շահումյանն Ալյոշա Զափարիձեյի հետ միասին դարձավ Բագվի պրոլետարիատի ղեկավար:

Նրանց ղեկավարության չնորհիվ կազմակերպվեց Անդրկովկասի առաջին խորհրդային կառավարությունը — Բագվի ժողովրդական կոմիսարների խորհուրդը: Այս խորհրդի նախագահ ընտրվեց Ստեփան Շահումյանը:

Անդրկովկասում ուս առաջին խորհրդային իշխանությունն եր, վորը անվանվեց Բագվի կոմունա:

Բագվի կոմունան գոյություն ուներ 1918 թվին. այդ կոմունան իր գոյությունը պահպանել կարողացավ մի քանի ամիս միայն, վորովհետեւ շրջապատված եր թշնամիներով: Անդրկովկասի մյուս տեղերում իշխում եյին մենշեվիկներն ու բուրժուական զանազան կուսակցություններ: Բագվի կոմունան կապ ուներ Խորհրդային Թուսաստանի հետ: Այդ ժամանակ Թուսաստանում տեղի ուներ քաղաքացիական պատերազմ: Պարտված կապիտալիստներն ու կալվածատերները հարձակումներ եյին գործում հաղթություն տարտե բանվոր գասակարգի վրա: Այդ պատճառով ել Թուսաստանի Խորհրդային իշխանությունը չեր կարող ոգնության հանել Բագվի կոմունային:

Թշնամիներով շրջապատված Բագվի կոմունան պարտվեց: Նրա ղեկավար 26 կոմունարներին մենշեվիկների ու եսերների կարգադրությամբ ու նրանց մասնակցությամբ գնդականարեցին անդիմացի վարձկան գեներալները:

26 կոմունարների հետ միասին գնդականարվեց նաև Ստեփան Շահումյանը, վորը Անդրկովկասի բայլշենքների ու բանվոր գասակարգի արթուն ղեկավարն ու առաջնորդն եր:

## ԱԼՅՈՇԱ ԶԱՓԱՐԻ ԶԵ

Ալյոշա (Պրակոֆի) Զափարիձեն Բագվի կոմունայի գլխավոր ղեկավարներից եր, նա եղ Ստեփան Շահումյանի հետ



Ալյոշա (Պրակոֆի) Զափարիձեն:

միտին գնդակահարվեց պըռլետաբական հեղափոխության թշնամիների ու գաճիճների կողմից:

Ալյոշա Զափարիձեն ծնվել է 1878 թվին Ռաճայում:

Ալյոշան քսան տարեկան հասակում արդեն գիտակից հեղափոխական եր, այդ ժամանակ նա սովորում եր Թիֆլիսում և առաջին անգամ կապեր ստեղծեց բանվորական գտղանի խմբակների հետ, իսկ հետո մտավ սոցիալ-գեմոկրատական կուսակցության շարքերը: Ահա այստեղից ել սկսվում ե Ալյոշա Զափարիձեյի անխոնջ ու յեռանգուն պայքարը բանվոր դասակարգի աղատազրման համար:

Այս շրջանում Թիֆլիսի յերկաթուղու գլխավոր արհեստանոցում աեղի ունեցավ բանվորական գործադուլ, վորի ղեկավարներից եր ու կազմակերպիչներից նաև Ալյոշա Զափարիձեն:

1900 թվին Թիֆլիսի առաջավոր բանվորները պատրաստվում եյին մայիսի 1-ի տոնակատարության և ցույցի համար. Ալյոշա Զափարիձեն ակտիվ մասնակցություն եր ցույց տալիս ցույցի կազմակերպման գործում: Ցարական ժանդարմաները վիստում եյին փողոցներում և փընտում տոնակատարության համար պատրաստվող առաջավոր բանվորներին ու նրանց ղեկավարներին, վորոնք կազմակերպված ձևով եցույցի դուրս գային: Ալյոշա Զափարիձեն իր բնակարանումն եր պահում մայիսակնեկան գաղանի թուուցիկները: Ցույցից առաջ նրան խուզաբեցին, գպրոցից հեռացըին և նստեցըին բանա: Մի տարի անց, նրան աքսորեցին իր հայրենիքը – Ռաճա:

Աքսորում յեղած ժամանակ Զափարիձեն մասնակցում եր Քութայիսի բանվոր դասակարգի մղած պայքարին:

1904 թվից Ալյոշա Զափարիձեն փոխադրվեց Բագու և այնտեղ սկսեց ծավալել իր կուսակցական աշխատանքները: Նա կարճ ժամանակի ընթացքում խոշոր հեղինակություն և գոտահություն ձեռք բերեց Բագվի պըռլետարների միջև: Ալյոշա անունով նա հայտնի գարձավ Բագվի և ամբողջ Անդրկովկասի պրոլետարիատին: 1905 թվին Զափարիձեյին ձերբակալեցին Բագվում և աքսորեցին Ռուսակի 5 տարի ժամանակով: Աքսորից վերադառնաւուց հետո, նա Թիֆլիսի բայլուկից կազմակերպության

աշխատանքներն եր զեկավարում։ Փետրվարյան հեղափոխությունից հետո, Բագվի բայլը կեների կազմակերպության պահանջով Ալյոշան տեղափոխվեց Բագու։ Նա գըլխավորեց Բագվի պրոլետարիատի պայքարը՝ հանուն պրոլետարական հեղափոխության։

Ալյոշա Զափարիձեն Բագվի առաջին խորհրդային կառավարության անդամն եր ու նրա զիխավոր զեկավարներից մեկը։ Ալյոշա Զափարիձեյին Ստեփան Շահումյանի և մյուս կոմունիստների հետ միասին գնդակահարեցին բանվոր դասակարգի թշնամիները կասպից ծովի մյուս կողմը ավաղու տափաստաններում։

Սակայն նրա պատգամները Բագվի բանվորները հեռուստար իրազործում են, նրանք վոչնչացրին բուրժուատներին ու նրանց հրու հպատակ մենշևիկների ու եսերների իշխանությունը, նրանք ձեռք բերին ու ստեղծեցին խորհրդային իրավակարդ և սոցիալիստական շինարարության առաջավոր դիրքերը գրավեցին։ Բագվի պրոլետարիատը նավթի հանման հնդամյա պլանը յերկու և կես տարում կատարեց։

#### 4. ԿՈՄՅԵՐԻ ՏՄ ԽՈՒԹՅՈՒՆԸ — ԼԵՆԻՆՅԱՆ ՎՈԽԱՎԵՌԻ ԹՅԱՆ ՓՈԽՎՐԻՆՈՂՆ Ե

Տամներկու տարի առաջ, մայիսի 1-ի որր, Մոսկվայի Կարմիր հրապարակում շինված ամբիոնի վրա կանգնած եր Լենինը։ Նրան շրջապատել եյին պատանիներ, յերիտասարդ տղա ու աղջիկների խմբեր։ սրանք դպրոցականներ եյին, կոմյերիտականներ, վորոնք հավաքվել եյին մայիսի 1-ի առթիվ։

Լենինը թեքվել եր տրիբունայի վրա և կրակու ու շերմ ճառ եր արտասանում։ Նա ասում եր, վոր հենց այդ յերիտասարդությունը կուսակցության սկսած գործը կը հասցնի մինչեւ վերջին հաղթանակը։ Մենք չենք հասնելու

ու տեսնելու կոմունիզմի բարդավաճումը, գուք կտեսնեք ու կավարտեք նրա կառուցումը և կիսյելեք այս։

Պատմությունը մեզ ճակատագրեց, վոր մենք քայլենք վշու ու քարքարու ծանր ուղիով և արյունու ու պայքարի ճանապարհով հասնենք այսորվա հաղթանակին, մենք պետք ե հարթեցինք այս ճանրան։ Ճեղանից շատերը յերջանիկ են նրանով, վոր նրանք ստիպված չեն լինելու քայլել այն վշու ու դժվարին ճանապարհով, վորով քողել ե հին սերունդը։ Այսպիսի խոսքերով եր զիմում էնինը յերիտասարդների հոծ բազմությանը սրանից 12 տարի առաջ։ Էնինը նրանց մեջ տեսնում եր սոցիալիզմի ու կոմունիզմի շինարարներին, նա կոմյերիտմիության մեջ



Առաջին կոմյերիտականներ — Կարմիր գվարդիտականներ բար ոնք կովումեն Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի համար։

տեսնում եր իր ստեղծած կուսակցության ժառանգին, վորը կավարտեր սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման խոշոր գործը։

Կոմյերիտմիությունը մարտականորեն կովում եր Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի համար։

Կոմյերիտմիությունը, անձնվեր կերպով, պայքարում եր այն ժամանակ, յերբ առաջին խորհրդային իշխանությունը շրջապատված եր մեր թշնամի կալիստական ծեփողայի ու ցարական օրուսաստանի գեներալներով, վորոնք ջանք եյին գործ զնում տապալելու մեր իշխանությունը:

Կոմյերիտմիությունն այսոր ել, կոմունիստական կուսակցության հետ միասին, պայքարում ե սոցիալիզմի կառուցման ֆրոնտում:

Կոմյերիտմիությունն իր աշխատանքները տանում է կոմունիստական կուսակցություն անմիջական դեկավարությամբ. կոմյերիտմիությունը իր միջից լավագույն ուժերով ե լրացնում ու խացնում կոմունիստական կուսակցության շարքերը:

Լենինի մահից հետո կոմյերիտմիությունը կոչվեց—Լենինյան կոմունիստական յերիտասարդության միություն, այն պատճառով, վոր կոմյերիտմիությունն ել ստեղծված ե Լենինի զինավարությամբ այնպես, ինչպես վոր կոմունիստական կուսակցությունը հիմնադրել ե Լենինը:


Կոմյերիտմիության անդամները կուսակցության անդամներից սովորում են, թե ինչպես պետք ե պայքարել բանվոր զաստկարգի շահերը պաշտպանելու համար:

Կոմյերիտմիությունն ողնում ե կուսակցությանը արդյունաբերության զարգացման և աճման գործում, նա պայքարում ե իրացնելու մեր ֆաքրիկա-գործարանների արդինականները: Գյուղում կոմյերիտականները խոշոր աշխատանք են տանում չքավոր և միջակ գյուղացիների միջև նրանց կոլեկտիվ անտեսությունները ներգրավելու համար, նրանք անխնա պայքար են մզում կունտեսությունների թշնամի կուլակների գեմ:

Այսպիսով կոմյերիտմիությունն ամբողջովին լծված ե մեր սոցիալիստական շինարարության աշխատանքներին:

Կուսակցությունը միշտ հոգում ե իրեն փոխարինող սերնդի մասին ու նրա ամբողջ աշխատանքը դեկավարությամբ:

Կոմյերիտմիությունն այսոր միլիոնավոր բանակ է: Սա Լենինյան կուսակցության խոշոր պահեստն է: Այս միլիոն-



Կոմյերիտականները ծանոթանում են արակտորի հետ:

ները կփոխարինեն Լենինի սերնդին: Նրանք կշարունակն էն Լենինի և նրա սերնդի սկսած գործը մինչև գերջանական հաղթանակը:

### ՅԵՐԻՏԱՎԱՐԴՈՒԹՅԱՆ ԿՈՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՇԽՈՆԱԼ

Կոմյերիտմիություններ գոյություն ունեն նաև խորհրդային յերկրից գուրս. այնուեղ, ուր գեռ կալիտալիստներն ու կարգածառերերն են իշխում: Կալիտալիստական յերկրներում կոմյերիտմիության կազմակերպությունները, կոմունիստական կուսակցության հետ միասին, պայքարում են տապալելու և վոչնչացնելու կապիտալիստական իրավակարգը: Այնպես վոր՝ նրանք գեռ պետք ե անցնեն պայքարի ու կովի գժվարին ճանապարհները:

Կապիտալիստական յերկրների բանվոր և աշխատավոր յերիտասարդությունը սաստայականորեն մտնում է կոմյերիտմիության մեջ ու ստեղծում ամուր ու յերկաթյակոմյերիտմիության կազմակերպություն:

Ամենառաջեղ կազմակերպությունը կապիտալիստական յերկրներում—դա Գերմանիայի կոմյերիտմիության կազմակերպությունն է:

Կոմյերիտմիության կազմակերպություններ գոյություն ունեն նաև Յեվրոպայի և Ամերիկայի կապիտալիստների կողմից ճնշված ու շահագործված արևելյան յերկրներում։ Առանձնապես ուժեղ է Չինաստանի կոմյերիտմիությունը, վորն իր շարքերում այսոր հաշվում և հարյուր հազար անդամից ավելի։

Չինաստանի կոմյերիտմիությունը, կուսակցության ղեկավարությամբ, կովում և ճնշող դրսի կապիտալիստների ու ներսի կալվածատերերի գեմ։ Չինաստանի կոմյերիտմիությունը կովում և խորհրդային Չինաստանի համար։ Կապիտալիստական յերկրներում յերիտասարդական սոցիալիստական շարժումն սկսվեց մինչ համաշխարհային պատերազմն սկսելու նաև առաջ յեկավ յերիտասարդության անտանելի շահագործման ու կեղեքման հետևանքով, վորի մեջ ապրում ելին նրանք ֆարբիկա-գործարաններում։ Յերիտասարդական այս շարժումն առանձնապես ուժեղացավ և կազմակերպված բնույթ ստացավ Գերմանիայում և Իտալիայում։



Չինացի կոմյերիտն մահապատճի յն յենթարկում։

Յերիտասարդության շարժմանն առանձնապես ակախմանակցեց Կարլ Լիբենեխուրը։

Յերիտասարդության գիտակից և առաջավոր մասը դևա դուրս յեկավ համաշխարհային պատերազմին։ Այս ժամանակը յերբ անինա կերպով պատերազմի պատճառով արյուն էր հոսում, առաջավոր պրոլետար յերիտասարդու-

թյունը Բերն քաղաքում յերիտասարդության միջազգային կոնգրես հրավիրեց, վոր տեղի ունեցավ 1915 թվին։ Սրանից հետո, 4 տարի անց, Բերլին քաղաքում տեղի ունեցավ յերիտասարդության միջազգային կոնգրես։ Կոնգրեսը միաժամանակ վորոշեց միանալ կոմունիստական ինտերնացիոնալի հետ, այսպիսով այս համախմբումը և միությունը վերածվեց Յերիտասարդության կոմունիստական ինտերնացիոնալի։ Յերիտասարդության կոմունիստական ինտերնացիոնալը կրծառ ձևով կոչվում է ԿիՄ։ Յերիտասարդական կոմունիստական ինտերնացիոնալի մեջ համախմբված են բոլոր յերկրների կոմյերիտմիության կազմակերպությունները։

### ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐԸ

Ամեն տարի սեպտեմբեր ամսախն կազմակերպվում են յերիտասարդության միջազգային որը։ Յերիտասարդական միջազգային որը ծնունդ տուավ համաշխարհային պատերազմի արհավիրքների ժամանակ 1915 թվին։

Այս որը պայմանագրի ու բողոքի որ և ընդդեմ պատերազմի։

Յերիտասարդության միջազգային առաջին որերը ստորև ցենտրալ յերիտասարդություն տուածնորդ Կարլ Լիբենեխուրի ղեկավարությամբ։

Յերիտասարդության առաջին որի լոգունուն եր՝ «Կորչի իմակերիտական պատերազմը»։ Այս լոգունունի տակ անցկացվեց նաև տասնյոթերորդ միջազգային որը անցյալ տարի։

Այս տասնյոթ տարվա ընթացքում խոշոր վոփոխություններ տեղի ունեցան։ Տեղի ունեցավ հոկտեմբերյան հեղափոխությունը, իսկ սրա շնորհիվ յերկրագնդի մեկ վեցերորդ մասի վրա տապալվեց կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությունը։ Բայց յերկրագնդի հինգ վեցերորդ մասի վրա կապիտալիստները դարձյալ իշխում

Են, նրանք ելի պատրաստություններ են տեսնում արյունահեղ պատերազմների դուրս գալու համար։ Նրանք պատերազմ են պատրաստում առանձնապես իրենց թշնամի խորհրդային իշխանության բանվոր դասակարգի դեմ։ այդ պատճառով ամբողջ աշխարհի կոմյերիտ կազմակերպու-



Դերժանի այի կոմյերիտները ցույցի ժամանակ յերիտասարդության միջազգային որդու տոթիվ։

թյունը, աշխատավոր յերիտասարդության հետ միասին, ամեն աարի միջազգային որը դուրս և գալիս ու ձայն բարձրացնում արյունահեղ պատերազմի ու կապիտալիտաների դեմ։ Նա պատրաստ և պաշտպանել բանվոր՝ դասակարգի ու աշխատավոր ժողովրդի առաջին սոցիալիտական հայրենիքը կապիտալիտաների հարձակումներից։


### Պ Ի Ո Ն Ե Բ Ն Ե Ր

Պատանի պիոներներն աշխատավորներին յերեխաներն են։ Նրանք բաժանված են խմբերի, այս խմբերը միասին կազմում են մի կազմակերպություն։ Այս կազմակերպությունը կոչվում է «ընկ. Լենինի անվան պատանի ոլիոնե-

րական կոմունիստական կազմակերպություն», կրծատ ձեռվով «պատանի պիոներներ»։ այս կազմակերպությունը կոմյերիտիության համար փոխարինողներ և պատրաստում և ոգնում կոմունիստական կուսակցությանը յերեխաների կոմունիստական դաստիարակության գործում։

«Պիոներ»—նոր գործ վորոնող, նոր աշխատանք ըսկողին են անվանում, պատանի պիոներները նոր գործի սկսողներն են։

Պատանի պիոներական յուրաքանչյուր կողեկտիվ և առեն մի խոռոչ ունի իր ղեկավարը։ Ղեկավարները կըցած են լինում կոմյերիտիության շարքերից։



Պիոներները կողմողում ծանօթանում են ցանող մեքենայի հետ։

Պիոներական խմբակներն ընտելանում են միասին, ընկերական ձեռվ աշխատելուն։ Նրանք ամբաղնդում են յերեխաների մեջ կայուն ընկերական կարգապահություն, նրանց ընտելացնում են սահմանված ժամերին աշխատելու. բացի սրանից, նրանք մշակած ունեն վարք ու բարքի հատուկ կանոնադրություններ։

Կուսակցության և կոմյերիտիության ղեկավարությամբ պիոներները մասնակցում են սոցիալիտական շի-

նարարությանը, Նրանք ոգնում են ֆաբրիկա-դորձարան-ների բանվորներին արդին պալանների իրացման ասպարեզում:


Պիոներներն իրենց ամբողջ ուժերով ոգնում են զյուղի կոլեկտիվացման գործին, Նրանք բացարում են զյուղու յերեխաններին, վոր միմիայն կոլտնառեսության աճումի ու զարգացումը կազմակերպության միջակ զյուղացիներին դժվարություններից, չքավորությունից ու կուլակների շահագործումից: Դպրոցներից շատերում պիոներները կազմուիրեպում են հարգածային լրիգագներ, վորոնք իրենց ուժերի ներածին չափ ոգնում են կուսնառություններին նրանց աշխատանքներներում: Այսպիսով պատահի պիոներներն իրենց ուժով ու յեռանդով մասնակից են սոցիալիստական շինարարությանը: Նրանք ջանք են գործ գնում, վոր իրենց լուման մուծեն սոցիալիստական շինարարության գործում:

Պիոներներն ոգնում են կուսակցությանն ու խորհրդային իշխանությանն այնպիսի խոշոր ու նշանակալից գործ ավարտելու մեջ, ինչպիսին և որինակ ընդհանուր պարտադիր ուսման կիրառումը և այլն:

Բանվորների պատահի զավակներն այսոր համախմբված են ու կազմում են միլիոնանոց պիոներական բանակներ: Այս բանակները կանցնեն կոմյերիտմիության մեջ, իսկ կոմյերիտմիությունը լենինյան սերունդն է, վորը կըստարի անդամ մեծ պատգամները:

ԱՅՍԿ և ԱՄՐԱԾՈՒՄ  
ԳՐՈՒԵՐՆԵՐ ԵՎ ԱԿԱՑԸ

3.01.975



1928 Փ  
1.681666

2. Պիոները՝ պիոներների, բոլոր յերկրների բանվոր ու գյուղացու յերեխանների ընկերն է, պիոները որինակելի յերկրոր յերեխանների համար:
3. Պիոները պայքարում է գիտության համար, գիտությունը մի ուժ և բանվոր դասակարգի գործի պայքարում:
4. Պիոները պահպանում է իր և մյուսների առողջությունը, անհանդուրժելի յերեխաններից լաել հայնոյանք, ձխախոտ ծիել պիոները առավոտը շուտ և վերկենում, ձեռներն ու յերեսը լվանում ու զբաղվում ֆիզիքական մարզանքով:
5. Պիոները սիրում է աշխատանք, նա կարող է աշխատել ամեն տեսակի պայմաններում:
6. Պիոները ջանում է, վոր լինի առողջ, դիմացկուն, համարձակ, աշխուժ և ուշադիր: Նա՝ միշտ աշխատում է յուրացնել պայքարելու և կառուցելու անհրաժեշտ հատկություններն ու որենքները:

#### ՊԱՏԱԿԱԿ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՈՐԵՆՔՆԵՐԸ

1. Պիոները հոգածարիմ և բանվոր դասակարգի գործին ու կենիյան պատգամներին:

## IV. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

### ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Յարի ժամանակ իշխանությունը գտնվում էր հարուստների—կապիտալիստների ու կալվածատերերի ձեռքին։ Աշխատավորները միանգամայն զուրկ ելին պետական գործերին մասնակցելու իրավունքից։ Միլիոնավոր աշխատավորների բախտը վորոշում ելին մի բուռն կապիտալիստներն ու կալվածատերերը։

Հոկտեմբերյան հեղափոխությունը առավալեց կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը, և յերկրի կառավարելու գործը անցավ բանվորա-գյուղացիական ու կարմիր բանակայինների պատգամավորների խորհուրդներին։ Խորհրդային իշխանության պետական գործերի կառավարելու ամերող ծանրությունը կենտրոնացած և բանվոր դասակարգի ձեռքին, վորի հետ միացած և յերկրի չքավոր, միջակ ու կոլտնտեսական գյուղացիական մասսան։ Խորհրդային իշխանության որոք քաղաքի կառավարման գործը գանգում է քաղաքային խորհրդի ձեռքին, իսկ գյուղի կառավարման գործը՝ գյուղիորհրդի ձեռքին։

### ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ԸՆՏՐՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ

Տեղական պետական որդաններ՝ քաղաքի խորհուրդները ու գյուղիորհրդներն ընտրում են միմիայն աշխատավոր մասսանները։ Բնարական որենքների համաձայն, ընտրողա-

կան իրավունք է տրվում բոլոր աշխատավորներին, նկատի չառնելով նրանց ազգությունը, կրոնը, բնակավայրը և այլն։ Բնարողական իրավունքը քաղաքացին ստանում է 18 տարեկան հասակից։ ընտրողական իրավունքներով ուղարկում են նաև բոլոր կարմիր բանակայիններն ու կարմիր նախաստինները (բուրժուական յերկրներում մեծ մասամբ զինվորներին զրկում են ընտրողական իրավունքներից)։ Խորհրդային որենքների համաձայն, ընտրողական իրավունքներից զուրկ են այն անձինք, վորոնք շահագիտական նպատակով շահագործում են վարձու ուժ, կամ ապրում են վոշ իրենց աշխատանքի աղբյուրավ։ Զայնից զրկված են նաև բոլոր հոգկորականները, նախկին ժանդարմները, վոստիկաններն ու գաղտնի վոստիկանության գործականները, հոգեկան հիվանդները և գատարանով ձանից զրկվածները։ Բուրժուական յերկրներում զանազան գաղտնի ձեռքով աշխատավորներին զրկում են ընտրողական իրավունքներից։ Խորհրդային որենքու բացահայտ կերպով ձայնագուրկ և անում բոլոր նրանց, վորոնք աշխատում են շահագործել ուրիշի աշխատանքը։ Արանք զրկվում են խորհուրդների մեջ ընտրվելու և ընտրելու իրավունքներից։

### ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔՈՒՄ — ԴԱ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ Ե

Այսպիսով՝ ամերող ուժն ու իրավունքը գտնվում է խորհուրդների ձեռքին։ Առաջուրդների կազմի մեջ ընտրվում են աշխատավորները, թե քաղաքում և թե գյուղում խորհրդի անդամ ընտրում են—լավագույն բանվորներին, կոլտնտեսականներին, չքավոր ու միջակ գյուղացիներին ու կարմիր բանակայիններին։

Քաղաքային խորհուրդները խոշոր աշխատանքներ ունեն կատարելու նրանց ձեռքումն և զանգում բոլոր տեսակի իրավունքները, ուրիշն նրանք ունետք են ոզան ամեն

բանի մասին, ինչպես՝ բնակարանների, ջրմուղի, կոյուղիների, մաքրության, մի խոռով պետք ե հոգան քաղաքի բարեշինության մասին:

Քաղաքային խորհուրդը պետք ե մտածի նաև քաղաքի տնտեսության ու լուսավորության մասին և այլն:

Այսոր առանձին ուշագրություն ե դաբճնվում քաղաքի տնտեսության կամ, ինչպես նրան ասում են, կոմունալ տնտեսության վրա:

Մեր իշխանության վերադաս որդանը ներկայումս առանձին լրջությամբ զրեց կոմունալ տնտեսության շինարարության խնդիրը:

Քաղաքներում հազարներով ու տասնյակ հազարներով բանվորներ են ապրում, վորոնք աշխատում են ֆաբրիկա-գործարաններում. նրանց հարկավոր են լավ հարմարություններով բնակարաններ. Քաղաքներում պետք ե կառուցել կինոներ, թատրոններ, դպրոցներ և այլն, վորոնք անհրաժեշտ են քաղաքի աշխատավորների կուլտուրական պահանջները բավարարելու համար:

Մեզ մնացել են հին քաղաքներ, վորոնք չեն համապատասխանում աշխատավոր ժողովրդի պահանջներին. այս քաղաքներում չկան այնպիսի պայմաններ, վոր աշխատավորը կարգին ապրել կարողանա, ուրեմն այս քաղաքները պետք ե վերակառուցվեն. այս խնդրի լուծումը կախված է քաղաքի կոմունալ տնտեսությունից, այս պատճառով քաղաքի կոմունալ տնտեսությունն այսոր մեր ուշագրության կենտրոնումն է:

## ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏՔ Ե ՄԱՍՆԱԿՑԵՐՆ ԱՇԽԱՎԱՎՈՐ ՄԱՍՍԱՆԵՐԸ

Քաղաքային խորհուրդը յուրաքանչյուր գործ պետք ե կատարի ահապես, վոր նա ոգուած բերի աշխատավոր մասսաներին. Այդ պատճառով խորհուրդներն աշխատում են, վոր քաղաքի շինարարության ու դեկավարման դորժում

ներգրավին ու լծեն աշխատավոր մասսաներին. Առաջներում, մինչև հեղափոխությունը, աշխատավոր ժողովությը սովոր եր, վոր նրա գործերը վարելին ինչպոր մարդիկ, այժմ նրանք պետք ե կարողանան ու ընտելանան իրենց գործերը զեկավարելու և իրենց կյանքն ու կենցազը կանոնավորելու հենց իրենք:

## ՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՐԴԻ ԲԱԺԻՆՆԵՐՆ ՈՒ ՍԵԿՑԻԱՆԵՐԸ

Քաղաքի խորհրդի աշխատանքները բաժանված են հետեւյալ բաժինների՝ լուսավորության, առողջապահական, կոմունալ տնտեսության և այլն. Խորհրդի անդամները բաժանված են ըստ սեկցիաների. մի վորեե սեկցիա աշխատում ե վորեե բաժնի հետ, որինակ՝ ժողովրդական լուսավորության բաժինը կոմունալ բաժնի հետ և այլն:

Սեկցիայի մեջ մտնում են վոչ միայն խորհրդի անդամները, այս վարբիկա-գործարանների, պրոֆմիությունների ներկայացուցիչները և այլն. Սեկցիան ամենից առաջ պարզում է, թե ինչ պետք ե շինվի, կամ արդի քաղաքում — ժողովրդական լուսավորության բնագավառում, և այլն: Հարկավոր ե, թե վոչ նոր գպրոցներ բանալ, հիվանդանոցներ, վորտեղ և հարկավոր երեքտրագարշի նոր գիծ անցկացնել, վոր մասում ինչ պետք ե կառուցվի և այլն: Այս խնդիրները կարգավորելու նպատակով սեկցիաները ժոտիկից ծանոթանում են, թե ինչպես են աշխատում դպրոցները, վոր գործարանն ե բնակարանի կարիք զգում, ինչպես են աշխատում խորհրդային հիմնարկները, և այլն: Սեկցիայի անդամներն այս ուղղությամբ են աշխատում ու պարզում ինքինները, նրանք այս ուղղությամբ կազմակերպում են եքսկուրսիաներ, իսկ հետո յենթարկում են մանրամասն մշակման. այստեղ նշում են, թե ինչ ձևով ուղղեն նկատած բացերը, ու վերջնական մշակման համար խնդիրը փոխադրում են խորհուրդ: Ինչքան շատ թվով բանվոր

մասնակցի խորհրդների աշխատանքներին, այնքան ավելի շուտ կբարելավվի աշխատավորների կյանքն ու կենցաղը: Արդ պատճառով խորհուրդները նպատակադրում են, վոր սելլյանների շուրջը համախմբեն աշխատավորների լայն մասսաները. այս ուղղությամբ մեծ ուշագրություն է դարձվում այն բաժիններին, վորոնք նախկին իշխանության ժամանակ մոռացության ելին մատնվել. այդ աշխատավոր կանանց շրջանում կատարվելիք աշխատանքն է ու նրանց ներգրավելը խորհուրդների գործերին:

### ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՅՈՒՂԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ինչպես քաղաքի, նույնպես և զյուղի ղեկավարման գործը գտնվում է աշխատավորների ձեռքին: Գյուղացիներն ընտրում են իշխանության ներկայացուցիչներին, հենց նրանց, վորոնք աշխատավորների վատահությունն են վայելում. ուրեմն ընտրելու և ընտրվելու իրավունքներով ողափում է զյուղի մեծամասնությունը, ընտրական իրավունքներից զուրկ և զյուղի չնչին փոքրամասնությունը: Ամեն մի աշխատավոր զյուղացու կարելի յե ընտրել վոչ թե միայն զյուղիսորհրդում, այլ և կարելի յե ընտրել համամիութենական խորհուրդների համագումարին մասնակցելու համար: Գյուղիսորհրդի անդամ ընտրում են առաջավոր կոլտնտեսականներին, չքավոր և միջակ զյուղացիներին:

### ԳՅՈՒՂԻ ԽՈՐՀՐԴՈՒՐԴ

Մի մեծ զյուղ, կամ մի քանի զյուղ միանալով ընտրում են զյուղիսորհրդուրդ, զյուղիսորհրդի վլուխ և կանգնած զյուղիսորհրդի նախագահը, վոր ղեկավարում է նրա աշխատանքները:

Գյուղիսորհրդը, վոր զյուղում ներկայացնում է պետքանության ողակը, իր առաջ գնում և հետեւյալ խնդիրները.

զյուղատնտեսության զարգացումը, չքավոր և միջակ զյուղացիների ներգրավումը կուտանսության մեջ, ապա հոգ և տանում նաև նրանց աձման ու զարգացման համար. պայքար և տանում անգրագիտության ու տգիտության դեմ, ձգտում է վերացնել զանազան հիվանդություններ, մի խոսքավ պայքարում է զյուղի ամեն տեսակ բացերի դեմ: Առանձնատուկ ճշտությամբ ջանում է կիրառել կյանքում բանվորացյուղացիական իշխանության որինքները, վորոնք ուղղված են զյուղի աշխատավորների կյանքի ու ապրուստի բարելավման ողաբն:

Սրանք են այն մեծ խնդիրները, վորոնց իր աշխատանքների ընթացքում կիրառում է զյուղիսորհրդուրդը:

### Ն Ա Կ Ա Զ

Ինչպես քաղաքի, այնպես ել զյուղի խորհուրդներում ընտրված պատգամավորներին ընտրողները տալիս են նաև կազ, վորի մեջ նրանք արտահայտում են իրենց կամքն ու գծում պատգամավորների հետագա աշխատանքների նախագիծը: Բուրժուական յերկրների որենքների համաձայն, պատգամավորներն այսպիսի նակադներով կաշկանդված չպետք է լինեն: Իսկ խորհրդային որենքների համաձայն, ընդհակառակը, ընտրողները վոչ միայն իրավունք ունեն նակազ տալու պատգամավորներին, այլ և նրանք կարող են և իրավունք ունեն պահանջելու հաշվետվություն թե տված նակադն ինչպես և կիրառվել կյանքում:

### ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՏ ԿԱՆՉԵԼԸ

Տված նակադը չկատարելու դեպքում ընտրողները, համաձայն խորհրդային որենքների, իրավունք ունեն ուղած ժամանակ պատգամավորին յետ կանչելու և նրա փոխարեն ընտրելու մեկ ուրիշի: Մինչդեռ բուրժուական յերկրներում ընտրողները զուրկ են նման իրավունքներից:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ  
ԱՌԱՋ

Խորհրդային կանոնագրությունը բուրժուական որենքներից տարբերվում է նաև նրանով, վոր նո հոգում և ամրապնդել ընտրողների և պատգամավորների միջև յեղած կազը, հենց այս նպատակով և գործադրում նակազը և, պատգամավորների մինչ ժամանակը լրանալը, յետ կանչելու իրավունքը։ Նման նպատակադրում ունի նաև պատգամավորների հաշվետվությունն ընտրողների առաջ - իր տարած աշխատանքների մասին։ Այնոն ժամանակ ընտրողները կարող են (Փարբիկալի կամ դյուզի) պատգամավորներից հաշվետվություն պահանջել տարած աշխատանքների վերաբերյալ։ «Պատգամավորական փորձուրդների անդամներ՝ այսպես և տաված մեր կանոնադրության մեջ, պարտավոր են իրենց ընտրողներին հաշվի տալու»։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԴԱՆԸ

Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության բարձրագույն պետական որգան համարվում է Համագրաստանյան Բանվորա-Գյուղացիական ու Կարմիր Բանակայինների Պատգամավորական Խորհուրդների Համագումարը։

Համագրաստանյան Խորհրդի Համագումարն ընտրում է Վրաստանի կենտրոնական Գործադիր Կոմիտե, վորք կրօնատ ձեռվ կոչվում է կենտրոնական համագործկոմ։

Համագրաստանյան կենտրոնական Գործադիր Կոմիտեն կազմում է Փողովրդական Կոմիտարների Խորհուրդ, Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության գործերը վարելու համար։

Փողովրդական Կոմիտարների Խորհուրդը կազմված է զանազան ժողովրդական կոմիտարիաներից։

Ժողովրդական կոմիտարիաներ՝ ժողովրդական լուսավորության, յերկրագործության, առողջապահության և այլն։

Լուսավորության ժողովրդական կոմիտարիանը զեկավարում է ամբողջ հանրապետության ժողովրդական լուսավորության գործը։


Առողջապահության կոմիտարիանը զեկավարում է ժողովրդի առողջապահական գործերը և այլն։

ՎՐԱՍՏԱՆԻ Ս. Խ. Զ. ՄՏՆՈՒՄ Ե ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը (Վ. Ս. Խ. Զ.) մասնում է Անդրկովկասի հանրապետությունների միության մեջ, կամ ինչպես նրան անվանում են՝ Անդրկովկասի Ֆեդերացիա։ Արանով Վրաստանի աշխատավոր ժողովուրդը յեղբայրական կազեր և ատեղծում Անդրկովկասի մյուս ժողովուրդների հետ։ Այս տարի Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները տոնեցին այս յեղբայրական միության - ֆեդերացիայի 10-րդ տարեդարձը։

Ցարի ու մենչեւիկների իշխանության ժամանակ Անդրկովկասի ժողովուրդների միջև տիրում եր անախորժություններ, թշնամանք ու զգվանք. և այս ատելությունը հաճախ փոխվում եր արյունահեղ կոփիլսերի։ Ասդրկովկասի ժողովուրդների մեջ ատելությունը դարերի ընթացքում սերմանում եր ցարական իշխանությունը այն պատճառվ, վոր սրանք իրար վրա հարձակումներ գործեցին, թուլանային, գնատվեյին, վորպեսզի հեշտ լիներ նրանց վրա իշխելու և շահագործման յենթարկելու։

Այսպիսի ատելություն ու զգվանք ելին ցանում մինչ խորհրդայնացումը Ազգբեջանի մուսավաթիստները, Հայաստանի գաշնակներն ու Վրաստանի մենշեկները։



Վ. Ա. Հ. Զ. Կենտրոնական նախագահ՝ Ֆ. Մախարաձե.


Խորհրդային իշխանության հաստատումից հետո, Անդրկովկասի ժողովուրդների միջև ստեղծվեց յեղբայրական ու բարեկամական միություն—կազ. այս ժողովուրդները յեղբայրաբար իրար սպնում են սոցիալիզմի կառուցման գործում:

Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդական Հանրապետությունը կազմված է յերեք հանրապետությունից՝ Աղբականի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունից, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունից և Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունից:



Համամիութենական Կենտրոնական նախագահ՝ Մ. Կալինիկով:

Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը մանում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ:



Խ. Ս. Հ. Մ. Ժողովական կոմիսարների Խորհրդի նախագահ՝ Գ. Մուսոսյ:

Խորհրդային Սոցիալիստական Համբապետությունների Միության (Խ. Ս. Հ. Մ.) վերադաս որդանն և Համամիութենական Խորհուրդների Համագումարը:

Մի համագումարից մինչև մյուս համագումար պումարելը վերադաս որդանը ներկայանում է Համամիութենական Կենտրոնական Գործադիր Կոմիտեն, կրօնա ձեռք կենտրոնական:

Այսպես են իրար հետ ձուլված Խորհրդային մեծ Միության ժողովուրդները. նրանք այս մեծ միության մեջ կերտում են բանվորական առաջին հայրենիքը՝ սոցիալիզմի կառուցման յերկիրը:

### ՀԱՐՑԵՐ ՈՒ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ում ձեռքում ե գտնվում իշխանության ու պետական գործերի ղեկավարությունը:
2. Մտեք ձեր քաղխորհուրդը և պարզեցեք, ինչպիսի յետորդի անդամների կազմը (քանի բանվոր կա, խորհրդային ծառայով կարմիր բանակային և այլն):
3. Պարզեցեք նաև, թե քանի բաժնից և բաղկացած քաղխորհուրդը և իմացեք, թե ամեն մի բաժին ինչ պարտականություն ունի:
4. Մտեք գյուղխորհուրդը և պարզեցեք խորդի անդամների կազմը (քանի կողմանական կա, չքավոր և միջակ գյուղացի, քանի բատրակ և այլն):
5. Պարզեցեք՝ քանի կին անդամ կա գյուղխորհուրդում:
6. Պարզեցեք, թե քանի սեկցիա յետ աշխատում գյուղխորդին կից և ամեն մի սեկցիան ինչ գործեր ե կատարում:
7. Աջակցեցեք խորհուրդների ընտրություններին (բաժանեցեք ընտրություններին մասնակցելու ծանուցագրերը և այլն):

## ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ

Ցերեա

|  |     |
|--|-----|
| Բանվորների յեվ գյուղացիների պայքարը՝ ցարի, կալվածատերերի ու կալիտալիստների դեմ         |     |
| 1. Գյուղացիության անտաճելի դրությունը ձորատիրության ժամանակ . . . . .                  | 3   |
| 2. Արդյունաբերության զարգացումն ու բանվոր դասկարգի առաջ գալը . . . . .                 | 12  |
| 3. Բանվորների ու գյուղացիների վիճակը ցարական կառավարության ժամանակ . . . . .           | 13  |
| 4. 1905 թ. հեղափոխությունը Ռուսաստանում . . . . .                                      | 27  |
| 5. 1905 թ. հեղափոխությունը Վրաստանում . . . . .  | 34  |
| <br>II. Հոկտեմբերյան հեղափոխություն  |     |
| 1. Համաշխարհային պատերազմ . . . . .  | 40  |
| 2. Փետրվարյան հեղափոխությունը . . . . .  | 46  |
| 3. Հոկտեմբերյան հեղափոխությունը . . . . .  | 48  |
| 4. Խորհրդային իշխանության հաստատումը Վրաստանում . . . . .                              | 52  |
| 5. Սոցիալիզմի շինարարությունը . . . . .  | 57  |
| <br>III. Կոմունիստական կուսակցություն  |     |
| 1. Համամիութենական կոմունիստական կուսակցություն (Բայլեկիների) — Հ. կ. կ. (բ) . . . . . | 60  |
| 2. Կոմունիստական ինտերնացիոնալ . . . . .   | 61  |
| 3. Կուսակցության առաջնորդները . . . . .  | 62  |
| 4. Կոմյերիտամիությունը լենինյան կուսակցության փոխարինողն ե . . . . .                   | 94  |
| <br>IV. Խորհուրդներ . . . . .  |     |
|  | 104 |



СА 46

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТ  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР



Т. ЧУМБУРИДЗЕ

# ОБЩЕСТВОВЕДЕНИЕ

Рабочая книга для III групп

ГОСИЗДАТ ГРУЗИИ